

# 2008թ. ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆՈՒՄ ԱՆՑԿԱՑՎԱԾ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ԿԱՐԾԻՔԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ

Սույն զեկույցը ներկայացնում է ԱՄՆ ՄԶԳ Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման (ՀԳՄԾ) ծրագրի շրջանակներում Հայաստանի բնակչության շրջանում իրականացված կոռուպցիայի վերաբերյալ հետազոտության հիմնական արդյունքները: Հետազոտության դաշտային աշխատանքները կատարվել են 2008թ. սեպտեմբերի 21-ից մինչև հոկտեմբերի 6-ը:

## ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

- Հայաստանաբնակ յուրաքանչյուր 10 հարցվածից 6-ը դժգոհ է երկրում տիրող ընդհանուր իրավիճակից: Գործազրկությունը համարվել է Հայաստանի ներկայիս ամենալուրջ հիմնախնդիրը: Հայաստանցիներին լրջորեն մտահոգում են նաև աղքատությունը, գնաճը և առհասարակ տնտեսական հիմնախնդիրները:
- Տասը հարցվածներից ավելի քան 8-ը կոռուպցիան համարում են երկրի առջև ծառայած լուրջ խնդիր, այսուհանդերձ, ոչ բոլոր շրջաններում են համամիտ այն տեսակետին, թե կոռուպցիան հայաստանյան իրականության մեջ սովորական երևույթ է:

- Թեև կոռուպցիայի մակարդակը բավական բարձր է համարվում, հարցվածների 30%-ը համարում է, որ այն նախորդ տարվա համեմատությամբ նվազել է:
- Կոռուպցիան չափազանց տարածված երևույթ է համարվում պետական հաստատություններում և հիմնարկներում: Հարցվածների երկու երրորդը հավատացած է, որ իրավապահ մարմինները և դատախազությունը որոշակիորեն կամ մեծապես կոռումպացված են: Հարցվածների գերակշիռ մասը (58%) կոռումպացված է համարում նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովը:
- Հարցվածներն ավելի քիչ են հակված որոշակի կարծիք հայտնելու Նախագահի կամ կառավարության աշխատակազմերում կոռուպցիայի մակարդակի մասին: Այդուհանդերձ, մեծ թվով հարցվածներ (45%) նշում են, որ կոռուպցիան առավել տարածված է բարձրաստիճան պաշտոնյաների, քան միջին (20%) կամ ցածր օղակի պաշտոնյաների (9%) շրջանում: Հարցվածների 17%-ը համարում է, որ կոռուպցիայի մակարդակը նույնն է պաշտոնեական բոլոր մակարդակներում:
- Կոռուպցիան տարբեր ոլորտներում և հանրային ծառայությունների բնագավառում նույնպես համարվում է բավականաչափ տարածված երևույթ: Հարցվածների 66%-ը համարում է, որ կոռուպցիան հատկապես բնորոշ է ընտրական համակարգերին և գործընթացներին, 65%-ն այն կապում է ոստիկանության, 62%-ը՝ ճանապարհային ոստիկանության, 61%-ը՝ առողջապահության և 58%-ը՝ կրթության ոլորտների հետ:
- Տարբեր ոլորտների և ծառայությունների հետ առնչվելու սեփական փորձի հիման վրա հարցվածները նշել են, որ կաշառքի պահանջարկն առավել մեծ է ճանապարհային ոստիկանության (այդ ոլորտի հետ առնչվելիս հարցվածների 37%-ից կաշառք են պահանջել), մաքսային մարմինների (34%) աշխատանքում և առողջապահության համակարգում (23%):
- Հայաստանցիների մեծամասնությունը (53%) հակված է շարունակել կաշառք տալ, քանզի համոզված է, որ որևէ գործ գլուխ բերելու այլ ճանապարհ կամ գործերի ընթացքն արագացնելու այլընտրանք չկա: Մյուս կողմից, ուրախալի է, որ գերակշռող մեծամասնությունը (72%) կիրաժարվի կաշառք վերցնելուց:
- Հայաստանցիների մեծամասնությունը չի ցանկանում հայտնել կոռուպցիայի դեպքերի մասին: Հարցվողների չնչին (1%) տոկոսն է նախկինում հայտնել տեղի ունեցած կոռուպցիայի փաստերի մասին: Հարցվողները բազմազան մտահոգություններ են արտահայտում, որոնք կարող են խոչընդոտել կոռուպցիայի փաստերի մասին հայտնելը, այդ թվում՝ այն համոզմունքը, որ հասարակությունը չի ողջունում կոռուպցիայի մասին հայտնող անձանց և՛ որ կոռուպցիայի մասին հայտնելու դեպքում էլ միևնույն է՝ միջոցներ չեն ձեռնարկվի: Հարցման արդյունքները ցույց են տալիս նաև, որ հարցվածների միայն 25%-ը պատկերացում ունի այն մասին, թե որ հաստատություններին պետք է դիմել կոռումպացված պաշտոնյայի մասին հայտնելու համար:
- Հայաստանցիներից քչերն են, որ կոռուպցիայի դեմ պայքարելու գործում ակտիվ դեր են ստանձնում: Հարցվածների մեծամասնությունը՝ 51%-ն այն կարծիքին է, որ ինքը ոչինչ չի կարող անել Հայաստանում կոռուպցիան նվազեցնելու համար: Սակայն շատերը ապագայում ավելի ակտիվ լինելու ցանկություն ունեն, ինչը կարող է օգնել կոռուպցիայի դեմ պայքարին, ինչպես օրինակ՝ կաշառք տալուց ձեռնպահ մնալը (74%), պաշտոնյաներին ծառայություն մատուցելուց հրաժարվելը (60%) և հակակոռուպցիոն ուսուցողական քարոզարշավներին աջակցելը (28%):
- Հակակոռուպցիոն աշխատանքներում ներգրավված ՀԿ-ների մասին իրազեկությունը ցածր է: Հարցվածների միայն 6%-ն է տեղյակ կոռուպցիայի դեմ պայքարով զբաղվող ՀԿ-ների մասին: Այսուհանդերձ, հարցվածները նշում են կոռուպցիային վերաբերող հարցերի որոշակի շրջանակ, որոնց առումով ՀԿ-ները կարող են օգնություն ցուցաբերել, մասնավորապես՝ տեղեկատվություն կոռուպցիայի դեպքում քաղաքացիների իրավունքների (61%), պարտականությունների (38%), ինչպես նաև հակակոռուպցիոն օրենսդրության (28%) մասին:
- Կոռուպցիայի կոնկրետ փաստի վերաբերյալ օգնություն ստանալու համար որևէ ՀԿ-ից դեկլարավորող հակակոռուպցիոն կենտրոն դիմելու ցանկություն չունեցող հայաստանցիների թիվը՝ 40%, մի փոքր գերազանցում է նրանց թիվը, ովքեր կհայցեին այդ օգնությունը՝ 35%: Նման կենտրոն դիմելու ցանկություն չունեցող անձանց մեծ մասը վստահ է, որ այդ կենտրոնները չափազանց թույլ են և հազիվ թե ի վիճակի լինեն օգնելու իրենց: Իսկ նրանք, ովքեր կդիմեին այդպիսի կենտրոններ, վստահ են, որ այդ կենտրոնները կօգնեն իրենց:

- Ինչ վերաբերում է կառավարության ձեռնարկած հակակոռուպցիոն նախաձեռնություններին, հարցվածների մեկ երրորդը նշում է, որ տեղյակ է դրանց մասին, սակայն դրանց արդյունավետության գնահատականը միանշանակ չէ: Երևանի բնակիչներն ավելի քննադատորեն են մոտենում կառավարության հակակոռուպցիոն ջանքերին: Նրանց 47%-ը այդ ջանքերն անարդյունավետ է համարում, իսկ 38%-ը՝ արդյունավետ: Երևանցիների 52%-ը չի հավատում, որ կառավարությունն ունի կոռուպցիայի դեմ պայքարելու անկեղծ ցանկություն և կամք, իսկ 44%-ը հավատում է այդ նախաձեռնությունների անկեղծությանը: Այլ քաղաքներում և գյուղական բնակավայրերում պատկերը հակառակն է:
- Կոռուպցիայի վերաբերյալ հայաստանցիների կարծիքը և գնահատականները ձևավորվում են՝ հիմնվելով լրատվամիջոցների (հիմնականում՝ հեռուստատեսության), ինչպես նաև ասեկոսեների վրա (գրույցներ ընկերների, ընտանիքի անդամների և ազգականների հետ): Երևանի բնակիչներն ավելի հակված են վստահել ասեկոսեներին, մինչդեռ այլ քաղաքներում, ինչպես և գյուղերում, ավելի շատ վստահում են լրատվամիջոցներին:
- Հայաստանում ամենաշատ դիտվող հեռուստաալիքներն են Հանրային հեռուստաընկերության Հ1 հեռուստաալիքը և «Շանթ» հեռուստաալիքը: Բնակչության 63%-ը ամեն օր դիտում է Հ1, իսկ 51%-ը՝ «Շանթ»: Սակայն լրատվության և առհասարակ տեղեկատվության հավաստիության առումով «Շանթին» փոքր ինչ ավելի են վստահում, քան Հ1-ին:

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

|  |     |
|--|-----|
| ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏՐԱՆՔԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ.....             | 5   |
| ԿԱՐԾԻՔՆԵՐ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏԻՐՈՂ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ .....  | 6   |
| ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ.....                                   | 9   |
| ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՀԵՏ ԱՌՆՉՎԵԼՈՒ ՄԵՓԱԿԱՆ ՓՈՐՁԸ.....                 | 15  |
| ԻՐԱԶԵԿՈՒԹՅՈՒՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ.....  | 24  |
| ՁԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐ և ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ..... | 29  |
| ՀԱՎԵԼՎԱԾ 1: Հարցաշար .....                                   | 33  |
| ՀԱՎԵԼՎԱԾ 2: Տվյալների աղյուսակներ .....                      | 61  |
| ՀԱՎԵԼՎԱԾ 3: Ընտրված խաչաձև տվյալներ .....                    | 151 |

# ՅԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԸՆՏՐԱՆՔԻ ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

## ԸՆՏՐԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

**Ընտրանքի չափը՝** 1549 հարցվողներ, որոնք ներկայացնում են Հայաստանի չափահաս բնակչությունը (18 տարեկան և բարձր):

**Սխալի թույլատրելի սահմանը՝** 2,49%՝ 95% վստահության միջակայքի դեպքում՝ հիմք ընդունելով զուտ պատահական ընտրանքը:

**Ընտրանքային հետազոտության տարածքային ընդգրկումը՝** Երևան քաղաքը և Հայաստանի բոլոր մարզերը: Ընտրանքը կազմված է այնպես, որ այն ներկայացուցչական լինի հետևյալ երեք մակարդակներով՝

- |                          |        |
|--------------------------|--------|
| 1. Երևան                 | n= 540 |
| 2. Այլ քաղաքներ          | n= 509 |
| 3. Գյուղական բնակավայրեր | n= 500 |

**Տվյալների հավաքման աշխատանքների ժամանակահատվածը՝** 2008թ. սեպտեմբերի 21-ից մինչև հոկտեմբերի 6-ը:

**Հարցում անցկացնող կազմակերպությունը՝** անցկացված մրցույթից հետո Ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամը (IFES) Հայաստանում հարցում անցկացնելու նպատակով պայմանագիր է կնքել Հետազոտական ռեսուրսների կոլկասյան կենտրոնների (CRRC) հետ, որը Եվրասիա համագործակցություն հիմնադրամի (ԵՀՀ) ծրագիր է:

**Ընտրանքի մեթոդը՝** բազմաստիճան քլաստերային ընտրանք՝ նախապես բաժանելով ըստ քաղաքային, գյուղական վայրերի և ըստ մարզերի:

**Ընտրության շրջանակը՝** «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերության տրամադրած բնակիչ բաժանորդների հասցեների ցուցակները: Ընտրանքը կազմավորելու քառաստիճան մոտեցումն իրականացվել է հետևյալ քայլերի միջոցով.

- «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ընկերության մասնաճյուղերը խմբավորվել են ըստ մարզերի. ընտրանքը հավասարաչափ բաշխվել է ըստ մարզերի և ըստ քաղաքային ու գյուղական բնակավայրերի:
- Մարզերում պատահական ընտրանքով կազմվել են ընտրանքի նախնական միավորներ (ԸՆՄ) կամ քլաստերներ. յուրաքանչյուր քլաստեր բաղկացած է միջին հաշվով 500 բնակիչներից, որը սովորաբար համընկնում է միևնույն ենթակայանից էլեկտրամատակարարում ստացող բնակիչների թվի հետ:
- Ընտրանքի նախնական միավորների սահմաններում ընտանիքների (ընտրանքի վերջնական միավորների) ընտրությունը կատարվել է պարբերական ընտրության մեթոդով:
- Ընտանիքում ընտրանքի վերջնական տարրերի (չափահասներ) պատահական ընտրությունը կատարվել է առաջիկա ծննդյան օրվա մեթոդով:
- Հարցազրույց վարելու տեխնիկան՝ դեմ առ դեմ հարցազրույցներ հարցվողների ընտանիքում՝ թուղթ ու մատիտի օգնությամբ:

Տվյալների համեմատումը. Տվյալները հավաքելուց հետո դրանք խմբավորվում են ըստ տարիքի և սեռի՝ նպատակ ունենալով իրականացված ընտրանքը համապատասխանեցնել նպատակային բնակչության պարամետրերին՝ Հայաստանի չափահաս (18 տարեկանից բարձր) բնակչության ներկայացվածությունն ապահովելու նպատակով<sup>1</sup>:

<sup>1</sup> Ըստ տարիքի և սեռի բնակչության բաժանման համար հիմք են ծառայել 2005թ. Հայաստանում կատարված Ժողովրդագրական և առողջապահական հետազոտության տվյալները: Բնակչության կազմի վերաբերյալ այդ հետազոտության տվյալներն ավելի արժանահավատ են, քան ՀՀ Ազգային վիճակագրական ծառայության (ԱՎԾ) տվյալները, որոնք հնացած են և ընդգրկում են նաև Հայաստանում չբնակվող քաղաքացիներին:

## ԳԾԱՊԱՏԿԵՐՆԵՐ


Այն գծապատկերներում և աղյուսակներում, որտեղ տոկոսային հարաբերությունները տրված են ըստ հարցվողների ընտրված մասի կամ ըստ ժողովրդագրական որոշակի խմբի, յուրաքանչյուր տոկոսային հարաբերության համար համապատասխան գծապատկերում կամ աղյուսակում նշվում է համապատասխան չիանեմատված ընտրանքի հիմքը (օրինակ՝ n=456): Բոլոր մյուս գծապատկերներում կամ բոլոր մյուս դեպքերում, երբ այլ բան նշված չէ, ընտրանքի հիմքը կազմում է ամբողջ ընտրանքի չափը՝ 1,549 (n=1,549):

Վերլուծության մեջ ներկայացված թվերի և նկարներում կամ աղյուսակներում տրված թվերի մեջ կարող են լինել աննշան տարբերություններ, ինչը թվերը կլորացնելու հետևանք է: Այդպիսի դեպքերը փոքրաթիվ են, ընդ որում տարբերությունը չի գերազանցում 1 տոկոսը:


## ԿԱՐԾԻՔՆԵՐ ՅԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏԻՐՈՂ ԸՆԴՅԱՆՈՒՐ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՄԱՍԻՆ

### ՅԱՅԱՍՏԱՆՑԻՆԵՐԻ ԳԵՐԱԿՇՈՒՂ ՄԱՍԸ ԴԺԳՈՐ Է ԵՐԿՐՈՒՄ ՏԻՐՈՂ ԻՐԱՎԻՃԱԿԻՑ

Հարցվողների մեծ մասը դժգոհություն արտահայտեց երկրում տիրող ընդհանուր իրավիճակից: Հարցվողների մի ստվար մաս՝ մեկ երրորդը, նշել է, որ շատ դժգոհ է երկրի ընդհանուր իրավիճակից, 26%-ը նշել է, որ որոշակիորեն դժգոհ է, ի տարբերություն 38%-ի, որը նշում է որոշակիորեն (36%) և միանգամայն բավարարված լինելու հանգամանքը (2%): Ըստ առանձին շրջանների դիտարկելիս մեծ տարբերություն չի նկատվել, բացառությամբ այն հանգամանքի, որ ավելի մեծ թվով «խիստ անբավարարվածներ» են գրանցվել շրջաններում (39%), քան Երևանում (30%): Հարցման արդյունքներն ըստ քաղաքականության և կառավարման համակարգի նկատմամբ ունեցած հետաքրքրության աստիճանի դիտարկելիս նկատում ենք, որ այդ ոլորտներով հետաքրքրված անձանց շրջանում երկրի ընդհանուր իրավիճակից բավարարվածության աստիճանն ավելի բարձր է: Փաստորեն, քաղաքականությամբ և կառավարության գործունեությամբ հետաքրքրվող անձանց 43%-ը խիստ կամ որոշ չափով բավարարված է երկրում տիրող իրավիճակից՝ ի տարբերություն նշված ոլորտի նկատմամբ անտարբեր անձանց, ովքեր կազմում են 35%: (Նկար 1)




Ընթացիկ տնտեսական իրավիճակին հարցվողները տվել են մույն խիստ գնահատականը, ընդամին՝ հարցվողների կեսը պատասխանել է, որ այն ոչ լավ է, ոչ վատ, իսկ մոտավորապես 42%-ը նշել է, որ այն շատ վատ է (16%) կամ որոշակիորեն վատ է (25%): Հարցվողների միայն 7%-ն է ավել տնտեսության վիճակի դրական գնահատական՝ նշելով, որ այն շատ լավ (1%) կամ լավ վիճակում է (6%): Ավելի տարեց հարցվողների կարծիքը տնտեսության վերաբերյալ շատ ավելի հոռետեսական էր. 55 և ավելի բարձր տարիքի հարցվողների 54%-ը նշել է, որ տնտեսությունը շատ վատ կամ որոշակիորեն վատ վիճակում է, մինչդեռ 18-34 տարեկանների մեկ



երրորդը և 35-54 տարեկանների 40%-ն են տվել նման պատասխան: Եթե դիտարկենք տնտեսական վիճակի գնահատումը ըստ շրջանների, ապա երևանաբնակ հարցվողների 46%-ը՝ մի փոքր ավելին, քան մյուս քաղաքներում և գյուղերում, այն համարել շատ վատ կամ վատ. այդպիսի գնահատական տվել են այլ քաղաքների բնակիչների 38 և գյուղաբնակների 42%-ը: Այս տվյալները փոքր-ինչ տարակուսանք են առաջացնում, քանզի Երևանը տնտեսապես ավելի զարգացած է, և բնակչության միջին եկամուտները Երևանում ավելի բարձր են, քան շրջաններում: Սակայն սա կարող է լինել այն բանի հետևանքը, որ երևանցիներն ավելի լավատեղյակ են եկամուտների անհամաչափ բաշխման վերաբերյալ, քան շրջանների կամ այլ քաղաքների բնակիչները: **(Նկար 2)**

## ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅՈՒՆԸ ԲՆՈՐՈՇՎԵԼ Է ՈՐՊԵՍ ՅԱՅԱՍՏԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՅԻՄՆԱԽՆԴԻՐ


Այն հարցին, թե այսօր որոնք են Հայաստանի գլխավոր հիմնախնդիրները, հարցվողների երկու երրորդը պատասխանել է՝ գործազրկությունը, որին հաջորդել են աղքատությունը (37%), գնաճը (32%) և ընդհանուր տնտեսական հիմնախնդիրները (21%): Հարցվողների 16%-ը կոռուպցիան ճանաչել է որպես Հայաստանի առջև ծառայած ամենամեծ խնդիրներից մեկը: Ակնհայտ է, որ տնտեսությունը և դրա հետ կապված խնդիրները առավել



հաճախ են նշվում, մինչդեռ քաղաքական խնդիրները կարծես ավելի քիչ են մտահոգում հայաստանցիներին: Միևնույն ժամանակ հարցվողների մոտ 14%-ը արտագաղթը նշում է որպես երկրի գլխավոր հիմնախնդիրներից մեկը: Դա զարմանալի չէ, քանի որ արտագաղթի ալիքը չի դադարում, բազմաթիվ հայաստանցիներ՝ հիմնականում տղամարդիք, ստիպված են տարվա մեծ մասն անցկացնել երկրից դուրս, որպեսզի կարողանան հոգալ իրենց ընտանիքների կարիքները: Այդ վիճակը արտացոլում է երկրի ներսում աշխատատեղերի պակասը և հաստատում է հարցվածների կողմից գործազրկությունը որպես գլխավոր մտահոգություն նշելու հանգամանքը: Այլ հիմնախնդիրները մտահոգում են հարցվողների 10-ից էլ քիչ տոկոսին՝ թոշակային համակարգը (8%), Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը

(8%), քաղաքական անկայունությունը (7%), առողջապահական համակարգը (5%), ինչպես նաև կրթական համակարգը, հարևան երկրների հետ հարաբերությունները և հանցագործությունների մակարդակը (4-ական տոկոս): **(Նկար 3)**

Գիտարկելով այդ տվյալները երեք տարածքային խմբերում՝ (1) Երևանում, (2) այլ քաղաքներում և (3) գյուղական բնակավայրերում, կարծիքների մեջ որոշակի տարբերություն ենք նկատում. երևանցիները ավելի շատ են մտահոգված կոռուպցիայի խնդրով, քան այլ քաղաքների բնակիչները և գյուղաբնակները: Իրոք, հարցվող երևանցիների 22%-ը նշել է, որ կոռուպցիան Հայաստանի առջև ծառայած գլխավոր հիմնախնդիրներից մեկն է, մինչդեռ այլ քաղաքների բնակիչ հարցվողների 15%-ը, իսկ գյուղաբնակների՝ 10%-ն է այդ կարծիքին: Թեև երեք հիմնական խնդիրների դասակարգումը նույնն է նշված տարածքային խմբերում, գործազրկությունը և աղքատությունը որպես գլխավոր հիմնախնդիրներ նշողների թիվը զգալիորեն ավելի բարձր է այլ քաղաքային բնակավայրերում և գյուղական բնակավայրերում, քան Երևանում: Արտագաղթը սպառնացող մտահոգություն է այլ քաղաքների բնակիչների 21%-ի համար, գյուղաբնակ հարցվողների 15%-ի և երևանաբնակների միայն 6%-ի համար: Գյուղաբնակ հարցվողներն ավելի շատ են մտահոգված ընդհանուր տնտեսական հիմնախնդիրներով, քան երևանաբնակ կամ այլ քաղաքների բնակիչ հարցվողները: **(Նկար 4)**







## ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԸՆԿԱԼՈՒՄԸ

### Հարցվողների մեծամասնությունը կարծում է, որ կոռուպցիան շատ լուրջ հիմնախնդիր է


Այն հարցին, թե որքանով է լուրջ կոռուպցիայի խնդիրը Հայաստանում, հարցվողների 63%-ը նշել է, որ այն շատ լուրջ է, 23%-ը համարել է, որ այն որոշակիորեն լուրջ է: Միայն հարցվողների 8%-ն է նշել, որ այն շատ լուրջ չէ կամ ընդհանրապես լուրջ խնդիր չէ: Գյուղաբնակ և այլ քաղաքների բնակիչ հարցվողներն ավելի հակված են կոռուպցիան համարելու լուրջ խնդիր, քան երևանաբնակները: Գյուղաբնակների 68%-ը, այլ քաղաքների բնակիչների 67%-ը կոռուպցիան համարել են շատ լուրջ խնդիր, մինչդեռ նույն կարծիքն է արտահայտել երևանաբնակ հարցվողների 56%-ը: «Շատ լուրջ» և «որոշակիորեն լուրջ» գնահատականները գումարելու դեպքում տարածքային տարբերությունները վիճակագրության տեսանկյունից դառնում են աննշան: **(Նկար 5)**



Հարցվողների աննշան մեծամասնությունը (51%-ը) համաձայն է այն ձևակերպմանը, որ կոռուպցիան կայացած փաստ է հայաստանյան իրականության մեջ, իսկ 44%-ը՝ համաձայն չէ: Ընդ որում մեծամասնությունը այլ քաղաքներում (61%) և գյուղական բնակավայրերում (56%) համաձայն է, որ կոռուպցիան փաստ է հայկական իրականությունում, մինչդեռ երևանաբնակ հարցվողների միայն 38%-ն է դրան համաձայն, իսկ 58%-ը համաձայն չէ: Սա կարող է նշանակել, որ երևանաբնակներն ավելի քիչ են հակված համարելու, որ կոռուպցիան հիմնավորապես ներթափանցել է հայաստանյան ապրելակերպ և՛ որ իրենք հավատում են կոռուպցիայի դեմ արդյունավետ կերպով պայքարելու հնարավորությանը: **(Նկար 6)**

Իսկապես, երևանաբնակ հարցվողների 24%-ը նշել է, որ կոռուպցիան կարելի է էականորեն նվազեցնել կամ ամբողջովին վերացնել, ի տարբերություն այլ քաղաքաբնակների և գյուղաբնակների համապատասխանաբար 19%-ի և 20%-ի: Այնուամենայնիվ, ընդհանուր պատկերը տխուր է, քանի որ քչերն են այն կարծիքին, որ կոռուպցիան կարելի է էականորեն նվազեցնել (18%) կամ լիովին վերացնել (3%), մինչդեռ հարցվողների 72%-ն այն կարծիքին է, որ կոռուպցիան անհնար է նվազեցնել (22%) կամ հնարավոր է նվազեցնել շատ փոքր չափով (50%):

Այն հարցին, թե արդյոք կոռուպցիայի մակարդակն անցյալ տարվա համեմատությամբ ավելի բարձր է, ցածր է, թե նույնն է, մեծ թվով հարցվողներ (37%) նշել են, որ կոռուպցիայի մակարդակը գրեթե նույնն է, ինչ որ անցյալ տարում, իսկ 29%-ի կարծիքով այն փոքր ինչ (27%) կամ մեծապես (3%) ցածրացել է: Հարցվողների միայն 18%-ն է համարել, որ կոռուպցիայի մակարդակը որոշ չափով բարձրացել է (10%) կամ շատ ավելի բարձր է (7%), քան մեկ տարի առաջ: **(Նկար 7)**




Այն հարցը, թե տարվա ընթացքում արդյոք պետական պաշտոնյաների կողմից կաշառքների պահանջարկի փոփոխություն տեղի ունեցել է՝ հաստատում է նշված միտումը. հարցվողների մոտ մեկ երրորդը (34%) պատասխանել է, որ կաշառքի պահանջարկը նույնն է մնացել, ինչ անցյալ տարի: Հարցվողների մոտավորապես 29%-ը նշել է, որ անցյալ տարվա համեմատությամբ այն նվազել է, իսկ 15%-ը՝ որ աճել է: Այս տվյալները ցույց են տալիս, որ թեև կոռուպցիայի մակարդակը ներկայումս էլ բարձր է համարվում, անցած մեկ տարվա ընթացքում կոռուպցիան չի խորացել, քանի որ մեծամասնությունը հավատացած է, որ այն մնացել է նույն մակարդակին կամ նվազել է:

## ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՄԱԿԱՐԴԱԿԸ ԲԱՐՁՐ Է ՀԱՄԱՐՎՈՒՄ ԻՐԱՎԱՊԱՅ ՄԱՐՄԻՆՆԵՐՈՒՄ ԵՎ ԴԱՏԱԽԱՋՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Երբ հարցվողներին խնդրում էին գնահատել կոռուպցիայի մակարդակը պետական տարբեր հաստատություններում և հիմնարկներում, պարզվեց, որ բոլոր դեպքերում, բացառությամբ մեկի, նշված մարմինները կոռումպացված համարողների թիվն ավելի մեծ էր, քան հակառակ կարծիք ունեցողներինը: Որպես ամենակոռումպացված հաստատություններ առավել հաճախ նշվել են իրավապահ մարմինները և դատախազությունը: Հարցվողների երկու երրորդը համարում է, որ դատախազությունը և իրավապահ մարմինները մեծապես (39%) կամ որոշ չափով (27%) կոռումպացված են: Կենտրոնական ընտրական հանձնաժողովը նույնպես համարվել է առավել կոռումպացված մարմիններից մեկը, ընդ որում 36%-ը նշել է, որ այն մեծապես կոռումպացված է, իսկ 22%-ը՝ որ որոշակիորեն կոռումպացված է: Յանկում հաջորդ տեղը գրավում են նախարարությունները և մարզային իշխանությունները. հարցվողների 53%-ը և 50%-ը համապատասխանաբար

Նկար 8. Կոռուպցիայի մակարդակի ընկալումը հաստատություններում և հիմնարկներում (% ընդհանուր թվից)



կարծում են, որ կոռուպցիայի մակարդակն այստեղ շատ բարձր է կամ որոշակիորեն բարձր է: Հարցվողների 45%-ը կարծում է, որ տեղական ինքնակառավարման մարմինները՝ քաղաքապետարանները, թաղապետարանները և գյուղապետարանները, մեծապես կամ որոշակիորեն կոռումպացված են: (Նկար 8)


Ցանկում ընդգրկված այլ հաստատություններ և հիմնարկներ ևս համարվել են կոռումպացված: Սակայն հարկ է նշել, որ այդ կատեգորիաները գնահատելիս «չգիտեմ» պատասխանն ընտրած կամ պարզապես պատասխանից խուսափած հարցվողների թիվը բավական մեծ է: Օրինակ, հարցվողների 45%-ն Ազգային ժողովը կոռումպացված է համարում, իսկ մեկ երրորդից ավելին (34%) ընտրել են «չգիտեմ» տարբերակը կամ չեն պատասխանել հարցին: Չպատասխանողների թիվը բարձր է եղել նաև Նախագահի և կառավարության աշխատակազմերի կոռումպացված լինելու փաստը գնահատելիս (համապատասխանաբար 38% և 35%): Համընդհանուր ուշադրության կենտրոնում գտնվող այդպիսի հաստատությունների և անձանց գնահատման ժամանակ անպատասխան հարցերի մեծ քանակը խոսում է կոռուպցիայի վերաբերյալ որոշակի կարծիք հայտնելու՝ հարցվողների անվճռակամության մասին:<sup>2</sup> Հարցվողների համապատասխանաբար մոտ 40%-ը և 44%-ը կարծում են, որ Նախագահի աշխատակազմը և կառավարության աշխատակազմը մեծապես կամ որոշակիորեն կոռումպացված են, իսկ համապատասխանաբար 22%-ը և 20%-ը համարում են, որ նրանք առհասարակ կոռումպացված չեն կամ շատ սահմանափակ չափով են կոռումպացված:

Մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակը միակ հաստատությունն է, որն ավելի շատ հարցվողներ համարվել են ոչ կոռումպացված (37%), քան՝ կոռումպացված (20%): Սակայն այս կատեգորիայի պատասխանների մեջ «չգիտեմ» կամ «հրաժարվում եմ» պատասխանների բարձր տեսակարար կշիռը (43%) ցույց է տալիս, որ արդյունքները ամբողջությամբ վստահելի չեն:<sup>3</sup>

2 Հարցվողների մեծ մասը համարում է, որ հետազոտության այս հարցերը չափազանց նուրբ են, չնայած այն հանգամանքին, որ հարցազրուցավարները բազմիցս հաստատել ու վերահաստատել են հարցման անանում լինելու հանգամանքը:

3 Այս կատեգորիայի, ինչպես նաև Երևանի քաղաքապետարանի, Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի և Քաղաքացիական խորհրդի դեպքում չպատասխանողների մեծ թիվը պայմանավորված է ավելի շատ այդ մարմինների վերաբերյալ իրազեկության պակասով, քան հարցերի զգայուն լինելով: Հարկ է նշել, որ չպատասխանողների թիվը շատ ավելի մեծ է այլ քաղաքներում և գյուղերում, քան Երևանում:

Տասր երևանաբնակներից 6-ը համարում է, որ Երևանի քաղաքապետարանը մեծապես (30%) կամ որոշ չափով (30%) կոռումպացված է, ի տարբերություն 24%-ի, որը համարում է, որ այն ամեննիկ կոռումպացված չէ (3%) կամ կոռումպացված է շատ սահմանափակ չափով (21%): Հարցվողների 15%-ն էլ պատասխանել է «չգիտեմ» կամ ընդհանրապես հրաժարվել է պատասխանելուց:




Այնուհանդերձ, այն հարցին, թե պետական հատվածի որ մասն է առավել կոռումպացված, մեծ թվով հարցվողներ (45%) նշել են, որ կոռուպցիան առավել ցայտուն է դրսևորվում բարձրաստիճան պաշտոնյաների շրջանում: Հարցվողների 20%-ը նշել է, որ կոռուպցիան առավել ցայտուն է միջին օղակի պետական պաշտոնյաների շրջանում և միայն 9%-ն է համարում, որ այն շատ բարձր է ցածր օղակի պետական պաշտոնյաների մակարդակում: Սա ցույց է տալիս, որ հայաստանցիների գերակշիռ մասը հավատացած է, որ կոռուպցիան իր երկրում ավելի շատ գործում է վերևից ներքև ուղղությամբ, քան՝ ներքևից վերև: Իսկ հարցվողների 17%-ն էլ կարծում է, որ կոռուպցիայի չափը նույնն է բոլոր մակարդակներում: **(Նկար 9)**

## Ընտրական գործընթացները, ոստիկանությունը, առողջապահությունը և կրթությունը համարվում են Հայաստանի առավել կոռումպացված ոլորտները

Այնուհետև հարցվողներին խնդրել են գնահատել Հայաստանում կոռուպցիայի մակարդակն՝ ընտրված ոլորտներում և ծառայություններում: Հարցվողների կարծիքով, ընտրական համակարգերը և գործընթացները, ոստիկանությունը, առողջապահությունը, կրթությունը, հարկային ծառայությունը և մաքսային մարմինները համարվում են Հայաստանի առավել կոռումպացված ոլորտները, ընդամենը դրանք նշվում են որպես մեծապես կամ որոշակիորեն կոռումպացված: Հարցվողների մի ստվար մաս՝ երկու երրորդը, կարծում է, որ կոռուպցիան մեծապես կամ որոշ չափով բնորոշ է ընտրական գործընթացներին (ներառյալ ընտրական հանձնաժողովները, ընտրողների ցուցակները, քվեաթերթերի հաշվարկումը, համամասնական և մեծամասնական թեկնածուները և նախընտրական քարոզարշավները): Ամենայն հավանականությամբ, սա արտացոլում է 2008թ. փետրվարի նախագահական ընտրությունների վիճարկված արդյունքները և դրան հաջորդած դրամատիկ իրադարձությունները: **(Նկար 10)**

**Նկար 10. Կոռուպցիայի մակարդակը ընտրված հատվածներում և ծառայություններում (% ընդհանուր թվից)**



Կոռուպցիան ոստիկանությունում ևս դիտարկվում է որպես միանգամայն բնորոշ երևույթ, ընդ որում 62%-ը համարում է, որ ճանապարհային ոստիկանությունը մեծապես կամ որոշ չափով կոռումպսցված է, իսկ 65%-ը նույն կարծիքին է ոստիկանության մնացած (բացառությամբ ճանապարհային ոստիկանության) կառույցների վերաբերյալ: Հարցվողների ծանրակշիռ մասը (61%) շատ կամ որոշ չափով կոռումպսցված է համարում առողջապահության համակարգը, 58%-ը նույն կարծիքն ունի կրթության համակարգի մասին: Կոռուպցիան զգալի է համարվել նաև հարկային ծառայությունում (57%) և մաքսային մարմիններում (54%):

Ավելի նվազ կոռումպսցված են համարվում կոմունալ-կենցաղային ծառայությունները՝ հարցվողների 68%-ը համարել է, որ կոռուպցիան շատ հազվադեպ կամ հազվադեպ երևույթ է այդ ծառայություններում: Այդ ցանկում կոմունալ ծառայությանը հետևում են հեռահաղորդակցության ոլորտը (հեռախոսակապ, ինտերնետ պրովայդերներ)՝ 61%, համայնքային ծառայությունները (աղբահանում, թույլտվությունների տրամադրում)՝ 54%, ինչպես նաև եկեղեցին՝ 52%: Հարցվողների 45%-ը նշել է, որ կոռուպցիան հազվադեպ է սոցիալական

ապահովագրության ծառայություններում, ի տարբերություն 34%-ի, որը համարում է, որ այն տարածված երևույթ է այդ ոլորտում: Հարցվողների 35%-ը համարում է, որ կոռուպցիան հազվադեպ երևույթ է ՀԿ-ներում, ի տարբերություն 11%-ի, որը համարում է, որ ՀԿ-ներում կոռուպցիա կա, իսկ ահա մեծամասնությունը (54%) պատասխանել է «չգիտեմ» կամ ընդհանրապես չի պատասխանել: ՁԼՄ-ներում և նոտարական ծառայություններում կոռուպցիան հազվադեպ համարողների թիվը գերակշռում է հակառակ կարծիքն ունեցողների թիվը:

Հարցվողների կարծիքները համարյա հավասարաչափ են բաժանվել պետեզիստի կոռումպացվածությունը գնահատելիս՝ 25%-ը համարում է, որ այն հազվադեպ է, իսկ 27%-ը սովորական երևույթ է համարում: Նույն գնահատականն է տրվում կուսակցություններին (համապատասխանաբար՝ 29% և 31%) և լիցենզիաներ (հավաստագրեր, թույլտվություններ) տրամադրող մարմիններին (21% և 25%): Սակայն պետք է հաշվի առնել, որ այս հարցերին չպատասխանողների թիվը բավականին բարձր է (համապատասխանաբար 49%, 40% և 54%):

| Նկար 11. Հայաստանում առավել կոռումպացված ոլորտները (ծառայությունները) (երեք պատասխան յուրաքանչյուր հարցվողից) | Տոկոսը     |
|---|------------|
| <b>Առողջապահություն</b>   | <b>38%</b> |
| <b>Ընտրական համակարգեր (գործընթացներ)</b>   | <b>33%</b> |
| <b>Ոստիկանություն (բացառությամբ ճանապարհային ոստիկանության)</b>   | <b>30%</b> |
| Կրթություն  | 26%        |
| Հարկային ծառայություն   | 25%        |
| Ճանապարհային ոստիկանություն   | 21%        |
| Մաքսային մարմիններ  | 18%        |

Հարցվողներին խնդրել էին նշել Հայաստանում երեք առավել կոռումպացված ծառայությունները կամ ոլորտները: Յուրաքանչյուր հարցվող նշել է իր կարծիքով առաջին, երկրորդ և երրորդ ամենակոռումպացված ծառայությունները և ոլորտները: Արդյունքների համադրմամբ պարզվել է, որ ամենակոռումպացվածն

է համարվում առողջապահության համակարգը (38%), երկրորդ տեղում են ընտրական համակարգերը և գործընթացները (33%) և երրորդ տեղում է ոստիկանությունը՝ բացառությամբ ճանապարհային ոստիկանության (30%): (Նկար 11)


## Կոռուպցիայի որոշակի դրսևորումների ոչ ձիշտ ընկալումը

Հասկանալու համար, թե ինչն են հայաստանցիները համարում կոռուպցիայի դրսևորում, հարցվողներին ներկայացվել են մի շարք երևույթներ՝ խնդրելով գնահատել, թե արդյոք այդ երևույթները կոռուպցիայի դրսևորումներ են, թե ոչ: Թեև հարցվողների մեծ մասը հստակ պատկերացում ուներ, թե ինչն է կոռուպցիա, ինչը՝ ոչ, հարցումների արդյունքները ցույց են տալիս, որ կոռուպցիայի որոշ դրսևորումներ համարվում են հանդուրժելի կամ նույնիսկ ընդունվում են որպես նորմալ երևույթ:

Օրինակ. այն հարցին, թե արդյոք հատուկ վերաբերմունքի արժանանալու նպատակով բժշկին մատուցած նվերը կոռուպցիա է, թե ոչ, կարծիքները բաժանվեցին հետևյալ կերպ՝ 49%-ը կարծում է, որ դա կոռուպցիա չէ, իսկ 48%-ն այն համարում է կոռուպցիա: Ընդ որում, 51%-ը ներկայացնող մեծամասնությունը չի համարում, որ պետծառայողի կողմից անձնական նպատակներով ծառայողական մեքենայի օգտագործումը կոռուպցիա է, իսկ 37%-ն այն համարում է կոռուպցիա: Կարծիքները տարբերվեցին նաև այն հարցի կապակցությամբ, թե արդյոք թոշակը բաժանելու համար տրված ոչ պաշտոնական փոքր գումարը կոռուպցիա է, թե ոչ: 53%-ը ներկայացնող մեծամասնությունը նշեց, որ դա կոռուպցիա է, իսկ զգալի թիվ կազմող 40%-ը համարեց, որ կոռուպցիա չէ: Հարցվողների մեկ երրորդը կոռուպցիա չի համարում պետական պաշտոնյայի կողմից իր ազգականին համալսարան ընդունելու հարցում օժանդակություն ցուցաբերելը, իսկ 60%-ը դա համարում է կոռուպցիա: (Նկար 12)

Կոռուպցիայի թվարկված այլ դրսևորումները կարծեք թե ավելի նվազ հանդուրժելի են համարվում կամ թերևս ավելի հստակ պատկերացում կա, որ դրանք իրենցից կոռուպցիա են ներկայացնում: Օրինակ, հարցվողների ջախջախիչ մեծամասնությունը համարում է, որ դատարանում իր օգտին վճիռ կայացնելու նպատակով դատավորին վճարելը և վարորդական իրավունքից չզրկվելու համար ոստիկանին կանխիկ գումար տալը կոռուպցիայի հստակ դրսևորումներ են՝ համապատասխանաբար 95% և 88%:

**Նկար 12: Արդյո՞ք այս երևույթը կոռուպցիայի դրսևորում է, թե ոչ (% ընդհանուր թվից)**



Հարցվողները նաև կարողանում էին տարբերակել գողության և կոռուպցիայի դրսևորումները: Այն հարցի առնչությամբ, թե արդյոք հարևանի այգուց առանց թույլտվության միրգ կամ ծաղիկներ քաղելը կոռուպցիա է, թե ոչ, 10-ից 9-ը երևույթը գնահատեցին որպես ոչ կոռուպցիա:

## ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՀԵՏ ԱՌՆՉՎԵԼՈՒ ՍԵՓԱԿԱՆ ՓՈՐՁԸ

### Հայաստանցիների մեծամասնությունը նպատակին հասնելու համար ստիպված է կաշառք տալ

Հարցվողներին հարց է տրվել պետական պաշտոնյաների և հաստատությունների հետ առնչվելու իրենց սեփական փորձի մասին՝ նպատակ ունենալով բացահայտել կոռուպցիայի հանդեպ եղած վարքագծի այն յուրահատուկ մոդելը, որը բնորոշ է Հայաստանի հասարակությանը: Հարցվողների զգալի մասը (36%) նշել է, որ երբ Հայաստանի քաղաքացին ի վերջո որոշում է կաշառք տալ, ապա նա նախապես գիտի, թե ինչպես պետք է տա և որքան պետք է տա: 34%-ը պատասխանել է, որ երբ որևէ մեկը որոշում է կաշառք տալ, ապա պետական ծառայողն ինքն է նշում վճարելու անհրաժեշտության մասին կամ ինքն է խնդրում վճարել: Իսկ 15%-ը նշել է, որ քաղաքացին ինքն է սեփական հայեցողությամբ կաշառք առաջարկում: Մա ցույց է տալիս, որ հայաստանցիների մեծ մասը սպասում է, որ պաշտոնյան կաշառք է պահանջելու և կաշառքը պահանջելու դեպքում պատրաստ է այն վճարել:

Հաջորդող հարցադրումը ցույց է տալիս, որ հարցվողների մեծ մասի կարծիքով, պետական ծառայողներին կաշառք վճարելու դեպքում քաղաքացին կարող է ստանալ ակնկալվող ծառայությունները: Տասը հարցվողներից 6-ը կարծում է, որ կաշառք տալը միանշանակ (15%) կամ որոշակիորեն (45%) կօգնի ստանալու ակնկալվող ծառայությունը կամ լուծել առաջացած խնդիրը: Միայն 27% - ն է կարծում, որ կաշառք վճարելու միջոցով նպատակին հասնելը միանշանակ (6%) կամ որոշակիորեն (22%) երաշխավորված չէ:



Հարցվողներին էր ներկայացվել կոռուպցիայի հիմքում ընկած դրդապատճառների մի ցանկ, որպեսզի վերջիններս ընտրեն, թե որոնք են կոռուպցիայի համար հիմք հանդիսացող հիմնական դրդապատճառները: Յուրաքանչյուր հարցվող կարող էր ընտրել առավելագույնը երեք տարբերակ: Ընդհանուր առմամբ, ընդունված կարծիքը կարծեք թե այն է, որ կոռուպցիան գոյություն ունի, քանի որ Հայաստանում գործ գլուխ բերելու համար այլ ճանապարհ չկա: Սա կոռուպցիայի հիմնական դրդապատճառ է համարել հարցվողների 61%-ը: Հարցվողների ևս մեկ մեծաթիվ խումբ կոռուպցիայի հիմնական դրդապատճառ է համարել գործընթացները արագացնելու անհրաժեշտությունը: **(Նկար 13)**

Կոռուպցիայի հիմքում ընկած այլ շարժառիթներից են՝ պատժից կամ պատժամիջոցներից խուսափելը կամ ավելի բարձր պաշտոնական վճարումներից խուսափելը, ընդ որում այս երկու շարժառիթներն էլ նշել են հարցվողների 20%-ը: Ավելի քիչ նշված շարժառիթներից են «պատշաճ վերաբերմունքի արժանանալը» (13%), «նախընտրելի կամ արտոնյալ վերաբերմունքի արժանանալը» (13%) և «եկամտի այլընտրանքային աղբյուր ձեռք բերելը» (12%):

| Նկար 13. Կոռուպցիայի հիմքում ընկած հիմնական դրդապատճառները (երեք պատասխան յուրաքանչյուր հարցվողից) | Տոկոսը |
|--|--------|
| Գործը գլուխ բերելու այլ ուղի չկա   | 61%    |
| Գործընթացները արագացնելը   | 46%    |
| Պատժից, պատժամիջոցներից խուսափելը  | 20%    |
| Բարձր պարտադիր վճարներից խուսափելը   | 20%    |
| Պատշաճ վերաբերմունք (ծառայություն) ստանալը   | 13%    |
| Արտոնյալ վերաբերմունք, արտոնություններ ստանալը   | 13%    |
| Եկամտի այլընտրանքային աղբյուրներ ստանալը   | 12%    |
| Այլ  | 6%     |

Այն հարցին, թե ինչպես կարճազանքեին կաշառք տալու առաջարկին, հարցվողների մեծամասնությունը (53%) պատասխանեց, որ պատրաստ է կաշառք տալ, իսկ 40%-ն ասաց, որ կաշառք չի տա: Մյուսները պատասխանել են, որ չգիտեն կամ հրաժարվել են պատասխանելուց: Երբ խնդրեցին բացատրել, թե ինչու կաշառք կտային, դարձյալ մեծամասնությունը (77%) պատասխանեց, որ ծառայություն ստանալու այլ ճանապարհ գոյություն չունի: Ութ տոկոսը պատասխանեց, որ կաշառք կտա, քանի որ կաշառք կտան, բայց կփորձեն սակարկել

որ այդպես են անում բոլորը, իսկ նույն թվով անձինք էլ նշեցին, որ կաշառք կտան, բայց կփորձեն սակարկել գումարը: **(Նկար 14)**



Կաշառք տալուց հրաժարվող անձինք հիմնավորեցին իրենց տեսակետը, ասելով, որ կաշառք տալն անընդունելի են համարում (58%): Մոտ 19%-ը նշել է, որ կաշառք չի վճարի և կաշխատի խնդիրը լուծել օրինական ճանապարհով: Ութ տոկոսը պատասխանել է, որ կաշառք չի տա այն պարզ պատճառով, որ փող չունի: Միայն 5%-ն է նշել, որ կաշառք չի վճարի, որովհետև վախենում է պատժվելուց: **(Նկար 16)**



Հետաքրքիր է, որ թեև հարցվողների մեծամասնությունը պատրաստ չէ խուսափել կաշառք տալուց, բայց մեծ մասը կիրառվել կաշառք վերցնելուց: Հարցվողների նշանակալից մեծամասնությունը (72%) նշել է, որ կաշառք չի վերցնի և միայն 21%-ն է համաձայն կաշառք վերցնել: **(Նկար 15)**

Կաշառք վերցնելուց հրաժարվողների մեծամասնության բացատրությունն այն է, որ դա անընդունելի է իրենց համար (73%): Տասնմեկ տոկոսը նշել է, որ կաշառք չի վերցնի, որովհետև մեծ է պատժվելու վտանգը, իսկ 6%-ը պատասխանել է, որ կաշառք չի վերցնի և կաշխատի խնդիրը լուծել օրինական ճանապարհով: **(Նկար 18)**

Կաշառք վերցնելուն համաձայն փոքրաթիվ հարցվողների 48%-ն ասել է, որ կաշառք կվերցնի, քանի որ փողի կարիք ունի, իսկ 34%-ը նշել է՝ որովհետև բոլորն են վերցնում: **(Նկար 19)**

| Նկար 16. Կաշառք չէի տա...<br>(կաշառք չտվողների %-ը՝ n=634) | Տոկոսը     |
|--|------------|
| <b>քանի որ դա անընդունելի է ինձ համար</b>                  | <b>58%</b> |
| <b>...և կփորձեի հարցերը լուծել օրինական ճանապարհով</b>     | <b>19%</b> |
| որովհետև փող չունեմ  | 8%         |
| որովհետև պատժվելու վտանգը մեծ է                            | 5%         |
| որովհետև դա անօրինական է                                   | 1%         |
| ելնելով իմ հավատքից, դավանանքից, խղճից                     | 1%         |
| Այլ  | 4%         |
| <b>ԶԳ/ԶՊ</b>   | <b>4%</b>  |

## Կաշառքի պահանջարկը ամենաբարձրն է առողջապահության համակարգում, ոստիկանությունում և մաքսային ծառայությունում

Բացի կոռուպցիայի ընկալման վերաբերյալ հարցերից, այս հետազոտությամբ նաև ուսումնասիրվել է, թե արդյոք հարցվողները վերջին 12 ամսվա ընթացքում առնչվել են պետական ծառայությունների և ոլորտների հետ և այդ առնչությունների ժամանակ արդյոք իրենցից կաշառք պահանջել են:

Հարցվողներն առավել հաճախ առնչվել են առողջապահության ծառայությունների (58%-ը՝ անցած մեկ տարվա ընթացքում՝ առնվազն մեկ անգամ), կոմունալ ծառայությունների (39%), կրթական համակարգի (38%), կապի (32%) և սոցիալական ապահովության (29%) ոլորտների հետ: **(Նկար 20)**

Հետաքրքրական է, որ թեև որոշ ոլորտներ ընկալվում են որպես բավականին կոռումպացված, ինչպես օրինակ կրթության ոլորտը, հարցվողների փոքր մասն է նշում, որ իրենցից կաշառք են ուզել, երբ վերջին անգամ առնչվել են այդ ոլորտի հետ: Հիսուսուր տոկոսը կրթության ոլորտը համարում է չափազանց կամ որոշակի չափով կոռումպացված, բայց միայն 14%-ից են կաշառք պահանջել վերջին մեկ տարվա ընթացքում այդ ոլորտի հետ

| Նկար 17. Կաշառք կտայի ...<br>(կաշառք վաճարողների %-ը՝ n=792) | Տոկոսը     |
|--|------------|
| <b>որովհետև չկա ծառայությունը ստանալու այլ ուղի</b>          | <b>77%</b> |
| <b>... և կփորձեի սակարկել գինը</b>                           | <b>8%</b>  |
| որովհետև բոլորն են տալիս                                     | 8%         |
| որովհետև անհրաժեշտ է հարցերը արագ լուծել                     | 2%         |
| որովհետև պետք է կարիքներս հոգամ                              | 1%         |
| Այլ  | 4%         |
| <b>ԶԳ/ԶՊ</b>   | <b>1%</b>  |

| Նկար 18. Կաշառք չէի վերցնի<br>(կաշառք չվերցնողների %-ը՝ n=1,114) | Տոկոսը     |
|--|------------|
| <b>որովհետև ինձ համար անընդունելի է</b>                          | <b>73%</b> |
| <b>որովհետև պատժվելու վտանգը մեծ է</b>                           | <b>11%</b> |
| <b>...և կփորձեմ հարցերը լուծել օրինական ճանապարհով</b>           | <b>6%</b>  |
| Այլ  | 9%         |
| <b>ԶԳ/ԶՊ</b>   | <b>2%</b>  |

| Նկար 19. Կաշառք կվերցնեի ...<br>(կաշառք վերցնողների %-ը՝ n=323) | Տոկոսը     |
|---|------------|
| <b>որովհետև փողի կարիք ունեմ</b>                                | <b>48%</b> |
| <b>որովհետև բոլորն են վերցնում</b>                              | <b>34%</b> |
| որովհետև ստիպված եմ «բաժին հանել» իմ ղեկավարությանը             | 7%         |
| Այլ   | 9%         |
| <b>ԶԳ/ԶՊ</b>  | <b>2%</b>  |


առնչվելիս: Սա ցույց է տալիս, որ կրթության ոլորտում եղած կոռուպցիայի ընկալումը կարող է որոշ չափով չափազանցված լինել կամ կոռուպցիան այդ ոլորտում ընդունում է այլ ձևեր, օրինակ՝ երկուստեք օգտակար լինելը կամ տնօրեններին, դասախոսներին, կամավոր կերպով նվերներ մատուցելը և այլն: Այս գործողությունները հարցվողները կարող են առաջին հայացքից չընկալել որպես կաշառքին համարժեք քայլեր:

Հարցվողները նշել են հետևյալ ոլորտները և ծառայությունները, որտեղ կաշառքի պահանջարկը բարձր է Հայաստանում՝ ճանապարհային ոստիկանություն (վերջին մեկ տարվա ընթացքում այդ ծառայության հետ առնչվողների 37%-ը նշում է, որ իրենցից կաշառք են պահանջել), մաքսային մարմիններ (34%), պետության կողմից երաշխավորված անվճար ծննդօգնություն (33%) և առողջապահության համակարգ՝ բացառությամբ պետության կողմից անվճար ծննդօգնության (23%): Հարցվողները նշել են նաև այն ոլորտները և ծառայությունները, որոնց հետ հաճախ են առնչվել, բայց քիչ են հանդիպել կաշառքի պահանջի դեպքերի. դրանք են սոցիալական ապահովությունը (13%), կոմունալ ծառայությունները (4%) և կապը (2%)։ **Նկար 21**-ում գետեղված գծապատկերը ցույց է տալիս կաշառքի պահանջարկի ընդգրկումը Հայաստանի տարբեր պետական ոլորտներում և ծառայություններում<sup>4</sup>:



<sup>4</sup> <sup>5</sup> Ընտրանքի հիմնական «ո» չափը յուրաքանչյուր սյունակի համար նշանակում է այն հարցվողների քանակը, ովքեր անցած տարվա ընթացքում առնչվել են յուրաքանչյուր ոլորտի կամ ծառայության հետ: Այն ոլորտները և ծառայությունները, որոնց համար «ո»-ը կազմել է 50-ից պակաս դիտարկումներ՝ աղյուսակում չեն ընդգրկվել, քանի որ ընտրանքի չափը չափազանց փոքր է եղել վստահելի վիճակագրական վերլուծության համար: Այդ ոլորտներն ու ծառայություններն են՝ ոստիկանությունը (բացառությամբ ճանապարհային ոստիկանության) (n=33), դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը (n=31), լիցենզիաներ, հավատարմագրեր, թույլտվություններ տրամադրող կազմակերպությունները (n=27):

Այնուհետև այն հարցվողներին, ովքեր հայտարարել են, թե կաշառք են տվել պետական հատվածում աշխատող կամ ծառայություններ մատուցող որևէ պաշտոնյայի, հարց է տրվել վճարված կաշառքի չափի մասին: Այս հարցը, որը հարցվողների մեծամասնության կողմից համարվել է նրբամտություն պահանջող հարց, շատ դեպքերում մնացել է անպատասխան, որովհետև հարցվողներն անհանգստացած էին, որ իրենք ինչ-որ կերպ կոռուպցիոն գործողության մասնակից են դարձել, թեև հարցման անանունությունը բազմիցս երաշխավորվել է: Պատասխանների բացակայության բարձր տեսակարար կշիռը երբեմն պայմանավորված է եղել նաև տրված կաշառքի ստույգ չափը վերհիշելու դժվարության հետ: Այնուամենայնիվ, ստացված տվյալները որոշ պատկերացում տալիս են Հայաստանի քաղաքացիների կողմից ընտրված պետական ոլորտներում վճարված կաշառքների չափերի մասին: **Նկար 22**-ում զետեղված աղյուսակը արտացոլում է վճարված կաշառքների միջին չափը այն ոլորտներում և ծառայություններում, որտեղ բավականաչափ դիտարկումներ են կատարվել՝ հիմնվելով իրենց տված կաշառքի չափը նշելու համաձայնություն տված հարցվողների թվի վրա: Առողջապահության ոլորտում (բացառությամբ պետության կողմից երաշխավորված անվճար ծննդօգնության) կաշառքի միջին չափը կազմել է 37892 ՀՀ դրամ, որը համարժեք է 124 ԱՄՆ դոլարին: Կրթության ոլորտում վճարված կաշառքի միջին չափը կազմել է 30730 ՀՀ դրամ: Ինչ վերաբերում է ճանապարհային ոստիկանությանը և սոցիալական ապահովագրությանը, ապա այդ ոլորտներում վճարված կաշառքի միջին չափը կազմել է համապատասխանաբար 15700 և 4580 ՀՀ դրամ:



Առողջապահության համակարգում կաշառք վճարած անձանց խնդրել են պարզաբանել, թե կոնկրետ որտեղ են տվել կաշառքը: Մոտ 46% նշել է, որ կաշառք է վճարել են առաջնային բուժօգնության հիմնարկներում և գրեթե նույն տոկոսը (47%) նշել է, որ կաշառք է վճարել երկրորդային կամ երրորդային բուժօգնության հիմնարկներում: Մնացած 7%-ը պատասխանել է «չգիտեմ» կամ հրաժարվել է պատասխանելուց:


Բացի պետական պաշտոնյաների հետ առնչվելու և կաշառքի պահանջի սեփական փորձից, հարցվողների մոտ 28%-ը նշել է, որ ազգականներից, ընկերներից, ծանոթներից և հարևաններից լսել է, որ նրանք էլ են վերջին 12 ամսվա ընթացքում կաշառք տվել պետական ծառայություն ստանալու համար:

Պետական պաշտոնյաների հետ առնչվելու վարքագծի մոդելը ձևավորելու համար հարց է տրվել, թե պետական հատվածի հետ առնչվելիս որոշակի սցենարներ ինչ հաճախականությամբ են հանդիպում: Հարցվողների մեկ երրորդը պատասխանել է, որ պաշտոնյաները հիմնականում ուղղակիորեն կաշառք չեն պահանջում, այլ ցույց են տալիս, որ փողի, նվերի կամ լավ վերաբերմունքի ակնկալիք ունեն: 26%-ը նշել է, որ բոլոր դեպքերում կամ

բավականին հաճախ պաշտոնյաները ուղղակիորեն փող, նվեր կամ լավ վերաբերմունք են պահանջում: Մոտ 24%-ը նշել է, որ համարյա բոլոր դեպքերում առանձնահատուկ վերաբերմունք ստանալու համար օգտագործել է սեփական կապերը: Հետաքրքրական է, որ այս բոլոր սցենարների վերաբերյալ հարցվողների մեծ մասը պատասխանել է, որ նրանց հետ դա պատահել է հազվադեպ կամ առհասարակ չի պատահել: Տասը հարցվողներից 8-ը նշել է, որ ստիպված չի եղել փող, նվեր կամ լավ վերաբերմունք ցուցաբերել պետական ծառայողին կամ դա հազվադեպ է արել: (Նկար 23)

| Նկար 22: Պետական հատված կամ ծառայություն (ներկայացված են միայն բավարար «N ունեցող հատվածները) | N (կաշառքի չափի մասին հայտնած հարցվողներ) | Վճարված կաշառքի միջին չափը (ՀՀ դրամ) | Վճարված կաշառքի միջին չափը (ԱՄՆ դոլար) |
|---|---|--------------------------------------|--|
| Առողջապահություն (բացառությամբ անվճար ծննդօգնության)  | 137                                       | 37,892                               | 124                                    |
| Կրթություն  | 48  | 30,730                               | 101                                    |
| Ճանապարհային ոստիկանություն   | 42  | 15,700                               | 51                                     |
| Սոցիալական ապահովություն  | 42  | 4,580                                | 15                                     |


Նկար 23. Պետական պաշտոնյաների հետ առնչվելիս որքան հաճախ եք հանդիպել հետևյալ երևույթներին (պետական պաշտոնյաների հետ առնչվողների %-ը)



## Չայաստանցիների մեծ մասը դժկամությամբ է հայտնում կոռուպցիայի փաստի մասին

Այնուհետև մի շարք հարցեր են տրվել կոռուպցիայի դեմ պայքարի մեջ ներգրավվելու՝ մարդկանց պատրաստակամությունը գնահատելու համար: Ընդհանուր առմամբ հայաստանցիները կարծեք թե չեն ցանկանում ակտիվ դերակատարություն ունենալ կոռուպցիայի դեմ պայքարում: Օրինակ, այն հարցին, թե ինչ կարող եք անձամբ անել Հայաստանում կոռուպցիան նվազեցնելու համար, հարցվողների մեծ մասը (51%) կամովի պատասխանել է, որ ոչինչ չի կարող անել: Եվ թեև հուսադրող է այն փաստը, որ հարցվողներից շատերը

կիսուսափեին պետական ծառայությունների դիմաց կաշառք տալուց (35%) և պաշտոնյաներին ու նրանց ազգականներին լավ վերաբերմունք ցուցաբերելուց (15%), ընդամենը փոքր թվով հարցվողներ ցանկություն ունեին նախաձեռնություն ցուցաբերելու և իշխանություններին կամ ՀԿ-ներին հայտնելու կաշառքի փաստի մասին (5%) կամ մասնակցելու հակակոռուպցիոն կրթական և ճանաչողական արշավներին: **(Նկար 24)**




Երբ այս նույն գործողությունների ցանկը ներկայացվեց հարցվողներին և հարց տրվեց, թե անցյալում մասնակցել են արդյոք համանման որևէ կոնկրետ գործողության կամ կուզենային մասնակցել ապագայում, շատերը ցանկություն հայտնեցին ապագայում իրականացնել հակակոռուպցիոն գործողություններ, որով կօգնեին նվազեցնելու կոռուպցիան Հայաստանում: Օրինակ, 74%-ը նշել է, որ ապագայում կիսուսափի կաշառք տալուց, իսկ 60%-ը կհրաժարվի լավ վերաբերմունք ցուցաբերել որևէ պետական պաշտոնյայի կամ նրա ազգականներին:

Սակայն քիչ թվով հայաստանցիներ են ցանկանում մասնակցել և աջակցել հակակոռուպցիոն կրթական (28%), ճանաչողական (21%) արշավներին կամ կոռուպցիայի փաստի մասին հայտնել ՀԿ-ներին (17%) կամ իրավասու մարմիններին (15%): Հարցվողների 12%-ը նշեց, որ ապագայում կուզենա դատական գործ հարուցել կոռումպացված պաշտոնյաների դեմ: Ուշագրավ է, որ նախկինում ոչ ոք ներգրավված չի եղել այսպիսի հակակոռուպցիոն գործունեության մեջ: **(Նկար 25)**


Կոռուպցիայի փաստի մասին հարցվողների ակնհայտ դժկամությունը մասամբ պայմանավորված է հայտնելու ընթացակարգի և այն հաստատությունների ու մարմինների մասին տեղեկատվության բացակայությամբ, որոնց պետք է դիմի Հայաստանի հասարակ քաղաքացին կոռուպցիայի փաստի կապակցությամբ: Հարցվողների միայն 25%-ն է պատասխանել, որ գիտի, թե ինչ հաստատությունների պետք է դիմել պետական պաշտոնյայի թույլ տված կոռուպցիայի փաստի մասին: Առավել հաճախ նշվող հաստատություններն են՝ ոստիկանությունը (26%) և գլխավոր դատախազությունը (25%): Ավելի քիչ նշվող հաստատություններից են՝ հատուկ քննչական վարչությունը (9%), Մարդու իրավունքների պաշտպանը (8%), դատարանները (8%), ինչպես նաև ՀՀ Նախագահի աշխատակազմը (6%): Մնացած հաստատությունների մասին նշումները կազմել են 5%-ից քիչ: **(Նկար 26)**

Կոռուպցիոն գործողության մասին հայտնելուն խոչընդոտում են նաև մի շարք մտահոգություններ, որոնք հարցվողները համարում են կոռուպցիայի փաստի մասին համապատասխան մարմիններին չհայտնելու պատճառ: Դրանցից են այն մտահոգությունը, որ Հայաստանի հասարակությունը չի ողջունում կոռուպցիայի մասին հայտնող անձանց (65%), որ միևնույն է ոչ մի քայլ չի ձեռնարկվի կոռուպցիայի մասին հայտնելուց հետո (64%) և՛ որ հայտնող անձինք կարող են դառնալ հաշվեհարդարի կամ վրեժի զոհ (47%): Կոռուպցիայի



վերաբերյալ չհայտնելու այլ պատճառներ նշած հարցվողների մեջ համեմատաբար մեծ է նրանց տեսակարար կշիռը, ովքեր չցանկացան նշել կոռուպցիայի մասին հայտնելուց խուսափելու որևէ պատճառ: Այն պնդմանը, թե «Չարժե հայտնել կոռուպցիայի մասին, երբ այն անձամբ ինձ չի վնասում», հարցվողների 49%-ը արձագանքեց, որ դա պատճառ չէ կոռուպցիայի մասին չհայտնելու համար, իսկ 38%-ը նշեց, որ՝ պատճառ է: Նույնկերպ, այն պնդումը, թե «Մարդիկ հիմնականում կոռուպցիայով են զբաղվում տնտեսական դժվարությունների պատճառով», հարցվողների մեծ մասը չի համարում կոռուպցիայի մասին հայտնելուց ձեռնպահ մնալու հիմնավոր պատճառ: (Նկար 27)


Երբ ուղղակի հարց տրվեց, թե արդյոք հարցվողները կամ իրենց ընտանիքի անդամներից որևէ մեկը վերջին 12 ամսվա ընթացքում հայտնել են որևէ պետական պաշտոնյայի կոռուպցիոն գործողության մասին, գերակշռող մեծամասնությունը (97%) պատասխանեց՝ ոչ, և միայն 1%-ը տվեց դրական պատասխան:<sup>5</sup>



<sup>5</sup> Քանի որ նախկինում կոռուպցիայի մասին հայտնածների թիվը չափազանց փոքր է (n=15), կոռուպցիայի մասին հայտնելու վերաբերյալ հարցվողների կարծիքի և փորձի մասին հաջորդող հարցաշարը այստեղ ներկայացված չէ:

## ԻՐԱԶԵԿՈՒԹՅՈՒՆ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՆԱԽԱԶԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

### ՀԿ-ների հակակոռուպցիոն նախաձեռնությունների վերաբերյալ իրազեկության պակասը



Այն հարցին, թե տեղյակ են արդյոք որևէ ՀԿ-ի մասին, որը Հայաստանում ակտիվորեն պայքարում են կոռուպցիայի դեմ, հարցվողների գերակշռող մասը պատասխանեց, որ տեղյակ չէ, իսկ 2%-ը նշեց, որ առհասարակ չգիտի, թե ինչ է ՀԿ-ն: Միայն 6%-ը պատասխանեց «այո»: **(Նկար 28):** Այդպիսի ՀԿ-ների մասին իրազեկությունը փոքր-ինչ ավելի մեծ է Երևանում (9%), քան այլ քաղաքային (6%) կամ գյուղական (4%) բնակավայրերում:

Հակակոռուպցիոն աշխատանքի մեջ ընդգրկված ՀԿ-ների մասին իրազեկ անձանց խնդրեցին նշել այդ ՀԿ-ների անունները: Հարցվողների 36%-ը նշեց Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիան, 31%-ը՝ Երևանի մամուլի ակումբը, 10%-ը՝ «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպությունը և 7%-ը՝ Ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամը (IFES): Ավելի քիչ նշված կազմակերպություններից են «Ասպարեզ» ակումբը (2%), «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոնը (2%), «Աքիլես» հասարակական կազմակերպությունը (1%) և «Սպառողների իրավունքների պաշտպանություն» հասարակական կազմակերպությունը (1%): **(Նկար 29)**

| Նկար 29. Հարցվողների կողմից նշված հակակոռուպցիոն աշխատանքի մեջ ընդգրկված ՀԿ-ներ (ՀԿ-ի կողմից ղեկավարվող հակակոռուպցիոն կենտրոնները ծանաչող անձանց %-ը, n=95) | Տոկոսը     |
|--|------------|
| <b>Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա</b>  | <b>36%</b> |
| <b>Երևանի մամուլի ակումբ</b>   | <b>31%</b> |
| «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» ՀԿ   | 10%        |
| Ընտրական համակարգերի միջազգային հիմնադրամ (IFES)   | 7%         |
| «Ասպարեզ» ակումբ   | 2%         |
| «Թրանսփարենսի Ինթերնեշնլ» հակակոռուպցիոն կենտրոն   | 2%         |
| «Աքիլես» ՀԿ  | 1%         |
| «Սպառողների իրավունքների պաշտպանության» ՀԿ   | 1%         |
| Սյլ  | 13%        |
| Չեմ հիշում անունը  | 13%        |
| Հրաժարվել են պատասխանել  | 6%         |

Մեծ թվով հարցվողներ ավելի շուտ ընդունում, քան մերժում են, որ հասարակական կազմակերպությունները (ՀԿ) կարող են Հայաստանում պայքարել կոռուպցիայի դեմ: Քառասունվեց տոկոսը լիովին կամ որոշակիորեն համոզված է, որ ՀԿ-ները կարող են Հայաստանում պայքարել կոռուպցիայի դեմ, մինչդեռ 38%-ը համոզված չէ: Մոտ 16%-ը չգիտի կամ հրաժարվում է պատասխանել: Սակայն այն հարցին, թե կոռուպցիայի գոհ դառնալու դեպքում իրենք կդիմեն արդյոք ՀԿ-ի կողմից ղեկավարվող հակակոռուպցիոն որևէ կենտրոն՝ օգնություն ստանալու նպատակով, մեծ թվով հարցվողներ (40%) պատասխանեցին, որ չեն դիմի, իսկ

ավելի պակաս թվով հարցվողներ (35%) նշեցին, որ կդիմեն: Մնացածները չգիտեին կամ հրաժարվում էին պատասխանելուց: Սա ցույց է տալիս, որ անհրաժեշտ է առավել ակտիվ քարոզչական աշխատանք կատարել Հայաստանի հասարակ քաղաքացիների շրջանում՝ նրանց հորդորելով հնարավոր այն օգուտների մասին, որ



կարելի է ակընկալել՝ կոռուպցիայի հետ առնչվելու դեպքում դիմելով ՀԿ-ներին:

Նրանց, ովքեր նշեցին, որ աջակցություն ստանալու համար չեն դիմի ՀԿ-ի կողմից ղեկավարվող հակակոռուպցիոն որևէ կենտրոն, հարցրեցին, թե ինչն է պատճառը: Այդպիսի կենտրոններ չդիմելու ամենահաճախ նշվող պատճառներից մեկն այն մտահոգությունն էր, որ ՀԿ-ներն ի վիճակի չեն լինի իրենց օգնելու, քանի որ թույլ են համարվում: Այս պատասխանը տվեցին հարցվողների 32%-ը: Ութ տոկոսը նշեց, որ չի դիմի մնացած կենտրոնների, որովհետև չի վստահում վերջիններիս: Մյուսները նշեցին, որ չեն դիմի՝ հետապնդումից վախենալու պատճառով (3%) կամ պարզապես այն պատճառով, որ սովոր չեն օգնություն հայցել մնացած կենտրոններից (3%) և կամ՝ որ մնացած աջակցությունն ընդունելի չէ հայկական հասարակությունում (2%):

Նրանք, ովքեր պնդում էին, որ կոռուպցիայի փաստի հետ առնչվելու դեպքում, աջակցություն ստանալու համար կդիմեն ՀԿ-ի կողմից ղեկավարվող հակակոռուպցիոն որևէ կենտրոն, նշեցին, որ այդպես կվարվեն, որովհետև հավատում են, որ այդ կենտրոնները կօգնեն իրենց (50%), կամ կդիմեն այդ կենտրոններին իրենց իրավունքները պաշտպանելու համար (12%) կամ՝ որովհետև իրենք ի վիճակի չեն ինքնուրույն լուծելու կոռուպցիայի հետ կապված խնդիրը (10%): Այդ կենտրոններ դիմելու ավելի քիչ նշվող պատճառներից են՝ կոռուպցիայի մնացած դեպքերը հետազայում կանխելու անհրաժեշտությունը (6%) կամ այդ կենտրոնների ազնիվ աշխատանքը և կոռուպցիայից զերծ լինելը (4%):


Այնուհետև հարցվողներին ներկայացրեցին հակակոռուպցիոն աջակցության տարբեր ձևեր և հարցրեցին, թե կոնկրետ ինչ տեսակի աջակցություն կցանկանային ստանալ ՀԿ-ներից: Հարցվողների մեծամասնությունը (61%) նշեց, որ կցանկանար տեղեկատվություն ստանալ կոռուպցիայի ոլորտի հետ կապված՝ քաղաքացիների իրավունքների մասին: Մոտ 38%-ը նշեց, որ կցանկանար տեղեկատվություն ստանալ կոռուպցիայի ոլորտի հետ կապված՝ քաղաքացիների պարտականությունների մասին, իսկ 28%-ն ասաց, որ կուզենար տեղեկանալ հակակոռուպցիոն օրենսդրությանը: Հարցվողների 21%-ը նշեց, որ կցանկանար տեղեկանալ այն հաստատությունների մասին, որտեղ կարելի է բողոք ներկայացնել պաշտոնյաների դեմ: Մա զարմանալի չէ, հաշվի առնելով հարցվողների այն մեծ թիվը, ովքեր չգիտեն, թե որտեղ է պետք դիմել կոռուպցիայի դեպքերի հետ առնչվելիս: Հակակոռուպցիոն աջակցության մեկ այլ ձև, որ հարցվողները կուզենային ստանալ ՀԿ-ներից, հակակոռուպցիոն կրթական գործունեությունն է (20%), կոռուպցիայի վերաբերյալ բողոքների ձևակերպման անվճար իրավախորհրդատվությունը (16%), հակակոռուպցիոն իրազեկության աշխատանքները (14%), դատարանում ներկայացուցիչ ունենալու անվճար հնարավորությունը (12%), կոռուպցիայի դեպքերի մասին ապացույցներ հավաքելու վերաբերյալ անվճար իրավական աջակցությունը (11%), և անվճար իրավական աջակցությունը կոռուպցիայի դեպքերի մասին փաստաթղթերի պատրաստման և հանձնման գործում (10%):

(Նկար 30)

| Նկար 30. ԴԿ-ների կողմից պահանջվող հակակոռուպցիոն աջակցության ձևերը (հարցվողը կարող է տալ բազմակի պատասխաններ) | Տոկոսը |
|---|--------|
| Կոռուպցիայի հարցերի վերաբերյալ քաղաքացիների իրավունքների մասին տեղեկատվություն                                | 61%    |
| Կոռուպցիայի հարցերի վերաբերյալ քաղաքացիների պարտականությունների մասին տեղեկատվություն                         | 38%    |
| Հակակոռուպցիոն օրենսդրության մասին տեղեկատվություն  | 28%    |
| Տեղեկատվություն այն հաստատությունների մասին, որտեղ կարելի է բողոքել պաշտոնյաներից                             | 21%    |
| Հակակոռուպցիոն կրթական գործունեություն  | 20%    |
| Անվճար իրավական աջակցություն կոռուպցիայի վերաբերյալ Ձեր բողոքը ձևակերպելու համար                              | 16%    |
| Հակակոռուպցիոն իրազեկության աշխատանքներ   | 14%    |
| Անվճար ներկայացուցչություն դատարանում   | 12%    |
| Անվճար իրավական աջակցություն կոռուպցիայի դեպքերի մասին տեղեկատվություն և ապացույցներ հավաքելու գործում        | 11%    |
| Անվճար իրավական աջակցություն կոռուպցիայի դեպքերի մասին փաստաթղթերի պատրաստման և հանձնման գործում              | 10%    |
| Այլ   | 1%     |
| Ոչինչ (վերոնշյալից և ոչ մեկը)   | 3%     |
| ԶԳ/ԶԴ   | 17%    |

## Տարբեր կարծիքներ պետական կազմակերպությունների հակակոռուպցիոն գործունեության արդյունավետության վերաբերյալ

Քանի որ Հակակոռուպցիոն գործողության մոբիլիզացման ծրագիրը (ՀԳՄԾ) աջակցում է մի քանի պետական կազմակերպությունների հակակոռուպցիոն ջանքերին, հարց տրվեց, թե արդյոք գիտեն, թե որոնք են դրանք և որքանով արդյունավետ են իրենք գնահատում դրանց պայքարը կոռուպցիայի դեմ: Հարցվողների 17%-ը գիտեին Հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման մոնիտորինգի հանձնաժողովի մասին: Հանձնաժողովի գործունեությանը ծանոթ հարցվողների 32%-ը նշեց, որ այդ կազմակերպության պայքարը կոռուպցիայի դեմ լիովին կամ որոշակիորեն արդյունավետ է, ի տարբերություն փոքր-ինչ ավելի պակաս թվով հարցվողների (28%), ովքեր կարծում են, որ այդ պայքարը լիովին կամ որոշակիորեն անարդյունավետ է: Մարդու իրավունքների պաշտպանի գործունեությունը համեմատաբար ավելի տեսանելի է, քանի որ հարցվողների երկու երրորդը (68%) ծանոթ էր նրա գործունեությանը, իսկ 42%-ը կարծում էր, որ ՄԻՊ գրասենյակի՝ կոռուպցիայի դեմ պայքարը արդյունավետ է, ի տարբերություն այն 27%-ի, որը այդ պայքարը անարդյունավետ է համարում: Ինչ վերաբերում է Վերահսկիչ պալատին, 43%-ը նշեց, որ տեղյակ է վերջինիս գործունեությանը, իսկ 57%-ը՝ որ տեղյակ չէ: Տեղյակների 36%-ը նշեց, որ կոռուպցիայի դեմ Վերահսկիչ պալատի պայքարը արդյունավետ է, իսկ 28%-ը նշեց, որ անարդյունավետ է: **(Նկար 31)**




Հակակոռուպցիոն ռազմավարության մոնիտորինգի իրականացման հանձնաժողովի գործունեության հետ ծանոթ հարցվողներին խնդրեցին նշել, թե ինչ գիտեն այդ հանձնաժողովի մասին: Հարցվողներից շատ քչերը կարողացան որոշ մանրամասներ ներկայացնել: Փաստորեն, 26%-ը նշեց, որ պարզապես տեղյակ է այդ հանձնաժողովի գոյության մասին և ոչինչ ավելի: Տասնինը տոկոսը նշեց, որ ընդամենը տեղյակ է, որ Հանձնաժողովը պայքարում է կոռուպցիայի դեմ: Վեց տոկոսը սխալմամբ պատասխանեց, որ Հանձնաժողովը հայտնաբերում և ձեռքարկում է կոռուպցիոն գործունեության մեջ ընդգրկված անձանց:

Այն հարցին, թե արդյոք հարցվողները գիտեն որևէ կազմակերպություն, որն իրենց մարզում անվճար իրավախորհրդատվություն է տրամադրում կոռուպցիայի հետ կապված դեպքերի վերաբերյալ, չնչին թվով հարցվողներ՝ 1%-ը, նշեց, որ տեղյակ է այդպիսի կազմակերպությունների մասին, ի տարբերություն 99%-ի, որը տեղյակ չէ: Երբ կոնկրետ հարց տրվեց Շահերի պաշտպանության և աջակցության կենտրոնների (ՇՊԱԿ) վերաբերյալ, որոնք աջակցում են քաղաքացիներին կոռուպցիայի հետ կապված խնդիրների լուծման և կոռուպցիայի դեմ բողոք-դիմումները համապատասխան պետական մարմիններին ներկայացնելու հարցում, հարցվողների 7%-ը նշեց, որ լսել է ՇՊԱԿ-ի մասին, իսկ մնացած 93%-ը չէր լսել: ՇՊԱԿ-ի գործունեության մասին տեղյակ փոքրաթիվ հարցվողների մեծամասնությունը (58%) նշեց, որ տեղյակ է նրանց դերի մասին, սակայն շատ քչերը գիտեին, թե ինչպես օգտվել ՇՊԱԿ-ից (19%) կամ դրանց ծառայություններից (27%):

Ինչ վերաբերում է Հայաստանի կառավարության կողմից իրականացվող հակակոռուպցիոն գործունեությանը, հարցվողների մեկ երրորդը նշեց, որ տեղյակ է այդ միջոցառումների մասին: Հարցվողների 25%-ն ասաց, որ տեղյակ է ճանապարհային ոստիկանության համակարգի բարեփոխումների մասին, իսկ մոտավորապես նույն թվով (24%) հարցվողներ էլ նշեցին, որ գիտեն առողջապահության նախարարության թեժ գծի մասին: Ավելի քիչ թվով հարցվողներ էին տեղյակ կառավարության հակակոռուպցիոն ռազմավարության (19%), մաքսային հաշվարկների թափանցիկության (19%) և միջազգային կոմպենցիաների ստորագրման (10%) մասին:



Նրանք, որ վերաբերում էին կառավարության հակակոռուպցիոն ռազմավարության և գործողությունների ծրագրի մասին (23%), այդ ծրագրի արդյունավետության վերաբերյալ տվեցին իրենց գնահատականը: Հիսունչորս տոկոս կազմող մեծամասնությունը գտնում էր, որ այն մեծապես կամ որոշակիորոն արդյունավետ է, ի տարբերություն 37%-ի, որի կարծիքով այն մեծապես կամ որոշակիորեն անարդյունավետ է:



Հարցվողների կարծիքները կառավարության կողմից իրականացվող հակակոռուպցիոն գործունեության արդյունավետության գնահատման վերաբերյալ բաշխվեցին գրեթե հավասարապես. 41%-ը նշեց, որ այն մեծապես կամ որոշակիորեն արդյունավետ է, ի տարբերություն 39%-ի, որը նշեց, որ այն մեծապես կամ որոշակիորեն անարդյունավետ է: Բավական մեծ թվով հարցվողներ (20%) նշեցին, որ չգիտեն կամ հրաժարվեցին պատասխանել: (Նկար 32)


Հարց տրվեց, թե արդյոք հարցվողները կարծում են, որ Հայաստանի կառավարությունը կոռուպցիայի դեմ պայքարելու անկեղծ ցանկություն և կամք ունի: Ընդհանուր առմամբ, հարցվողների մեծամասնությունը (54%) ավելի շուտ համաձայնեց, քան չհամաձայնեց (38%) այն մտքի հետ, որ կառավարությունն անկեղծ է կոռուպցիայի դեմ իր պայքարում:

Տվյալներն ըստ շրջանների բաժանելիս նկատեցինք, որ երևանաբնակներն առավել քննադատաբար են մոտենում կառավարության հակակոռուպցիոն ջանքերին, քան այլ քաղաքների բնակիչներն ու գյուղաբնակները: Նրանց տոկոսը, ովքեր կարծում են, որ կառավարության ջանքերն ընդդեմ կոռուպցիայի անարդյունավետ են, Երևանում կազմում է 47%, ի համեմատություն այլ քաղաքաբնակների 37%-ի և գյուղաբնակների 33%-ի: Ավելին, միայն Երևանում է, որ կոռուպցիայի դեմ կառավարության պայքարը անարդյունավետ համարողների թիվը (47%) գերազանցում է արդյունավետ գնահատողների թիվը (38%): Մյուս շրջաններում պատկերը հակառակ է: (Նկար 33)



Նույն պատկերը ստացվեց կոռուպցիայի դեմ պայքարի հարցում՝ կառավարության անկեղծությանը վերաբերող հարցման ժամանակ: Երևանաբնակ հարցվողների մեծամասնությունը (52%) չհամաձայնեց այն մտքին, որ ներկայիս կառավարությունն անկեղծ ցանկություն և կարողություն ունի պայքարելու կոռուպցիայի դեմ, այն դեպքում, երբ այլ քաղաքների բնակիչները և գյուղաբնակների գերակշռող մեծամասնությունը՝ 10-ից 6-ը, համաձայնեցին նույն մտքին: **(Նկար 34)**

Քաղաքացիական հասարակության գործունեության մեջ Հայաստանի հասարակ քաղաքացիների ընդգրկվածության մակարդակը գնահատելու համար հարցվողներին ներկայացվեցին մի շարք գործողություններ և հարց տրվեց, թե արդյոք վերջին 12 ամսվա ընթացքում մասնակցել են նման գործողությունների: Բացառությամբ ծանոթների հետ երկրում և համայնքում տեղի ունեցող իրադարձությունների շուրջ քննարկումների, 10 հարցվողներից առնվազն 7-ը վերջին մեկ տարվա ընթացքում մասնակցել է նման միջոցառումների, ընդամին ոչ մեծ թվով հարցվողներ մասնակցել են ավելի ակտիվ ընդգրկվածություն պահանջող քաղաքացիական միջոցառումների, ինչպիսիք են ցույցերը (8%), համայնքի ավագանու ժողովները (7%), համայնքի կամ քաղաքապետարանի ժողովները կամ քաղաքապետարանի (քաղաքապետի) հրավիրած ժողովները (6%), համայնքի խնդիրների լուծմանն ուղղված որևէ նախաձեռնություն (6%): Էլ ավելի քիչ թվով հարցվողներ են անցած մեկ տարվա ընթացքում մասնակցել համայնքի կամ ազգային խնդիրների շուրջ քննարկման՝ որևէ կազմակերպված խմբի շրջանակում (3%) կամ ստորագրել որևէ խնդրագիր (3%): **(Նկար 35)**




## ԶԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐ ԵՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ


### Զանգվածային լրատվամիջոցները և ասեկոսները որպես կոռուպցիայի մասին տեղեկատվության աղբյուր

Կոռուպցիայի մասին տեղեկատվություն ստանալու համար հայաստանցիների մեծ մասը հակված է վստահել զանգվածային լրատվամիջոցներին և ասեկոսներին: Այն հարցին, թե տեղեկատվության որ աղբյուրներին են վստահում երկրում կոռուպցիայի մակարդակը գնահատելու համար, 4 հարցվողներից 3-ը պատասխանեց, որ հիմնվում է զանգվածային լրատվամիջոցների կողմից տրամադրված տեղեկատվության վրա, ինչպիսիք են հեռուստատեսությունը, ռադիոն և թերթերը: Մոտ 69%-ը նշեց, որ տեղեկատվություն է ստանում ընկերների և ծանոթների հետ ունեցած զրույցներից, իսկ 54%-ը նշեց, որ հիմնվում է ազգականների կամ ընտանիքի անդամների տրամադրված տեղեկատվության վրա: Քսանչորս տոկոս կազմող փոքրաթիվ հարցվողներ պատասխանեցին, որ կոռուպցիայի իրենց գնահատականը հիմնված է անձնական փորձի վրա, և միայն 5%-ը նշեց, որ վստահում է ՀԿ-ներից ստացած տեղեկատվությանը:

Կոռուպցիայի մասին զանգվածային լրատվամիջոցներից ստացված տեղեկատվությանն ավելի շատ վստահում են կանայք, քան տղամարդիկ (համապատասխանաբար 78% և 73%): Մինևույն ժամանակ, այն տղամարդկանց տոկոսը, որոնք նշում են, որ կոռուպցիայի իրենց գնահատականը հիմնված է անձնական փորձի վրա, ավելի բարձր է, քան կանանց տոկոսը, (28%` 21%-ի դիմաց): Նկատվում են նաև որոշ տարածաշրջանային տարբերություններ, քանի որ Երևանից դուրս` այլ քաղաքներում և գյուղերում բնակվողները ավելի շատ են հակված վստահել կոռուպցիայի վերաբերյալ զանգվածային լրատվամիջոցների տեղեկատվությանը, այն դեպքում, երբ երևանաբնակ հարցվողները կոռուպցիայի մասին տեղեկանալու համար ավելի շատ հիմնվում են ասեկոսների (զրույցներ ընկերների և ծանոթների հետ) վրա: Այլ քաղաքներում և գյուղերում բնակվող տասը հարցվողներից առնվազն 8-ը կոռուպցիայի մակարդակը գնահատելու համար հիմնվում են զանգվածային լրատվամիջոցների տեղեկատվության վրա` այն դեպքում, երբ Երևանում 10 հարցվողներից 6-ն է վստահում զանգվածային լրատվամիջոցների տեղեկատվությանը: Երևանաբնակ հարցվողների 73%-ի կոռուպցիայի գնահատականը հիմնվում է ընկերների և ծանոթների հետ զրույցների վրա, ի տարբերություն այլ քաղաքների բնակիչների 68%-ի և գյուղաբնակների 66 %-ի: (Նկար 36)




## Հ1-ը ամենաշատ դիտվող հեռուստաընկերությունն է, իսկ ՇԱՆԹ-ը՝ ամենավատահելին



Քանի որ որևէ արդյունավետ հակակոռուպցիոն քարոզարշավ պետք է անցկացվի այն ՋԼՄ-ների միջոցով, որոնց մարդիկ դիտում են ընթացիկ իրադարձությունների մասին տեղեկանալու համար, սույն հետազոտության շրջանակում տվյալներ են հավաքվել ամենամեծ ժողովրդականություն վայելող զանգվածային լրատվամիջոցների, ինչպես նաև տարբեր հեռուստաալիքներից, ռադիոկայաններից, թերթերից և ինտերնետային կայքերից օգտվելու հաճախականության վերաբերյալ: Հայաստանում ամենադիտվող հեռուստաալիքը Հանրային հեռուստաընկերության Հ1 ալիքն է, որը ամեն օր դիտում է հարցվողների 63%-ը, որին հետևում են «Շանթ» ՀԸ-ը՝ 51%, OPT-ն՝ 44%, «Արմենիա TV-ն»՝ 42% և PTP-ը՝ 40%: Ռադիոկայանների մեջ ամենաշատ ունկնդրվող

«Ազատություն» ռադիոկայանն է՝ ամեն օր՝ 13%, որին հետևում է Հայաստանի հանրային ռադիոն՝ 6% և «Հայ FM» ռադիոկայանը՝ 5%: (Նկարներ 37, 38)


Ինչ վերաբերում է տպագիր լրատվամիջոցներին, հինգ առաջատար թերթեր ունեն ընթերցման համեմատաբար համանման մակարդակ՝ «Առավոտ» և «Հայկական ժամանակ» թերթերը՝ շաբաթական 7% ընթերցմամբ, որոնց հաջորդում են «Չորրորդ իշխանությունը»՝ 6%, «Իրավունքը»՝ 5% և «Հայոց աշխարհը»՝ 4%:



Նորություններ և տեղեկատվություն ստանալու համար շատ քիչ հայաստանցիներ են դիմում ինտերնետի օգնությանը: Փաստորեն, էլփոստից և ինտերնետից օգտվելու տարրական գիտելիքներ չունեցող հարցվողները կազմում են զգալի մեծամասնությունը (76%): Ութ տոկոսը նշեց, որ ունի ինտերնետից օգտվելու սկսնակի գիտելիքներ, 7%-ը պատասխանեց, որ գիտելիքները միջին մակարդակի են և միայն 6%-ն ունի գիտելիքների բարձր մակարդակ: Տարբեր վերկայքերի ժողովրդականության մակարդակն ուսումնասիրելիս հաշվի է առնվել հարցվողների ինտերնետային գրագիտության մակարդակը: Ինտերնետային գիտելիքների առնվազն միջին մակարդակ ունեցող հարցվողները նորություններ և տեղեկատվություն ստանալու համար ամենահաճախ այցելում են [www.1plus.am](http://www.1plus.am) կայքը: Հարցվողների 18%-ը նշում է, որ վերջին 12 ամսվա ընթացքում այցելել է այդ կայքը: Դրան հաջորդում են [www.armenianow.com](http://www.armenianow.com) և [www.armenialiberty.org](http://www.armenialiberty.org) կայքերը՝ 7-ական տոկոս [www.hetq.am](http://www.hetq.am) կայքը՝ 6%:

Հարցվողներին նաև խնդրեցին նշել ամենավատահելի լրատվական աղբյուրը, որը տրամադրում է հավաստի նորություններ և տեղեկատվություն: Հետաքրքրական է այն փաստը, որ Հանրային հեռուստառադիոընկերության Հ1 հեռուստաալիքը, լինելով ամենաշատ դիտվող ալիքը, վատահելիության վարկանիշով այնուամենայնիվ փոքր-ինչ զիջում է «Շանթ» հեռուստաալիքին: Հարցվողների մոտ 29%-ը «Շանթ» հեռուստաալիքը համարում է նորությունների ամենահավաստի աղբյուրը, որին հաջորդում են Հ1-ը՝ 25%, «Արմենիան»՝ 9%, OPT-ն՝ 7%: Ամենավատահելի ռադիոկայանը «Ազատություն» ռադիոկայանն է՝ 7%:

Վստահության վարկանիշը փոքր-ինչ տարբերվում է տարբեր տարածաշրջաններում: Երևանում 36%-ն է նշել «Շանթ» հեռուստաալիքը որպես տեղեկատվության ամենավստահելի աղբյուր, այն դեպքում, երբ գյուղական վայրերում 29%-ն է «Շանթ»-ին համարում ամենավստահելի աղբյուր, իսկ այլ քաղաքային վայրերում՝ միայն 21%-ը: Ըստ 32% հարցվողների, թե գյուղական, և թե բացի Երևանից այլ քաղաքային բնակավայրերում Հ1 հեռուստատեսությունը գնահատվում է որպես տեղեկատվության ամենավստահելի աղբյուրը: **(Նկար 39)**







## ՀԱՎԵԼՎԱԾ 1. Հարցաշար



Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ - ՀԱՅԱՍՏԱՆ



Եվրասիա համագործակցություն հիմնադրամի ծրագիր

### Կոռուպցիայի հետազոտություն ՀՀ տնային տնտեսություններում

2008թ. սեպտեմբեր-հոկտեմբեր

#### ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹ

M-1. Ռեսպոնդենտի համարը \_\_\_ \_\_\_ \_\_\_ ID# \_\_\_ \_\_\_ \_\_\_

M-2. Ընտրանքային կետ \_\_\_ \_\_\_ \_\_\_

| M-3. Հարցազրույցի ամսաթիվը | Օրը | Ամիսը | .Տարին |
|----------------------------|-----|-------|--------|
|                            |     |       |        |

#### M-4. Մարզ

|              |                |              |            |
|--------------|----------------|--------------|------------|
| 1. Արագածոտն | 4. Գեղարքունիք | 7. Շիրակ     | 10. Տավուշ |
| 2. Արարատ    | 5. Կոտայք      | 8. Սյունիք   | 11. Երևան  |
| 3. Արմավիր   | 6. Լոռի        | 9. Վայոց Ձոր |            |

M-5. Հայաստանում ներկայիս բնակության վայրի (քաղաքի/գյուղի) կոդը

\_\_\_\_\_

M-6. Բնակավայրի տեսակը.

1. Քաղաքային
2. Գյուղական

M-7. Զրուցավարի կոդը \_\_\_ \_\_\_ \_\_\_

M-8. Ո՞ր այցից է հարցազրույցը կայացել:

|               |               |               |
|---------------|---------------|---------------|
| 1. 1-ին այցից | 2. 2-րդ այցից | 3. 3-րդ այցից |
|---------------|---------------|---------------|

M-9. Հարցազրույցի սկիզբը (24 ժամյա ռեժիմով)՝ \_\_\_ : \_\_\_

(Հարցազրույցի սկիզբը համարել Q-1 հարցը)

M-10. Հարցազրույցի լեզուն՝ 1. Հայերեն 2. Ռուսերեն

**Այստեղից սկսեք ընտրանքի գործընթացը:**

1. Ձեզ տրված ցանկից գտեք նախապես պատահական ընտրանքով ընտրված տուներ կամ բնակարանը:
2. Ներկայացեք. «Բարև Ձեզ: Իմանունը----- է: Ես աշխատում եմ Եվրասիա համագործակցություն հիմնադրամի ծրագիր հանդիսացող Յետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ-Յայաստան կենտրոնում: Մենք իրականացնում ենք Յայաստանում հանրային կարծիքի հարցում և կցանկանայինք Ձեր տնային տնտեսությունից մեկ չափահաս անդամի հետ հարցազրույց անցկացնել: Տնային տնտեսություն ասելով նկատի ունենք բոլոր այն մարդկանց, ովքեր ներկայումս ապրում են միասին և համատեղ են հոգում սննդի հոգսերը՝ անկախ իրենց գրանցումից և ազգակցական կապերից: Վերջիններիս (միայն չափահասների) մասին խնդրում ենք ասել որոշ տեղեկություններ:

Երաշխավորում ենք, որ այս հարցման արդյունքում ստացված պատասխանները կլինեն գաղտնի՝ համաձայն միջազգային հետազոտական չափանիշների, և դրանք կօգտագործվեն միայն ընդհանրացված/ամփոփ տեսքով:

3. Հարցրեք տնային տնտեսության 18 տարին լրացած յուրաքանչյուր անդամի անունը, սեռը և ծննդյան ամսաթիվը, ամիսն ու տարին:

| Անունը | Սեռը<br>(1 ար., 2 իգ) | Ծննդյան ամսաթիվը, ամիսն ու տարին (օրինակ՝ 24/08/1992) |  |  |
|--------|-----------------------|---|--|--|
|        |                       |   |  |  |
|        |                       |   |  |  |
|        |                       |   |  |  |
|        |                       |   |  |  |
|        |                       |   |  |  |
|        |                       |   |  |  |
|        |                       |   |  |  |
|        |                       |   |  |  |
|        |                       |   |  |  |
|        |                       |   |  |  |
|        |                       |   |  |  |
|        |                       |   |  |  |
|        |                       |   |  |  |
|        |                       |   |  |  |
|        |                       |   |  |  |
|        |                       |   |  |  |
|        |                       |   |  |  |
|        |                       |   |  |  |
|        |                       |   |  |  |
|        |                       |   |  |  |
|        |                       |   |  |  |

4. Տնային տնտեսության այն անդամը, ում ծննդյան օրն առաջիկայում հաջորդն է՝ ընտրվում է որպես պատասխանող (ռեսպոնդենտ): Նրա համարը շրջանակի մեջ վերցրեք և փորձեք շարունակել հարցազրույցը նրա հետ:
5. Եթե ընտրված ռեսպոնդենտը տանն է և հրաժարվում է հարցազրույցից, կամ եթե տնային տնտեսության այլ անդամ չի թողնում անցկացնել հարցազրույցը, քաղաքավարի հրաժեշտ տվեք և անցեք ցուցակից մյուս տանը կամ բնակարանին:
6. Եթե ընտրված ռեսպոնդենտը տանը չէ, փորձեք նշանակել հարցազրույցն այդ օրվա մեկ այլ ժամի (գյուղական վայրերում) կամ դաշտային աշխատանքների ժամանակահատվածում մեկ այլ օր (քաղաքային վայրերում): Գրանցեք այդ պայմանավորվածության օրն ու ժամը ստորև.

Օր. \_\_\_\_\_ Ժամ. \_\_\_\_\_



**Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ –  
ՀԱՅԱՍՏԱՆ**



**Եվրասիա համագործակցություն հիմնադրամի  
ծրագիր**

## **Հանրային կարծիքի հետազոտություն ՀՀ տնային տնտեսություններում**

2008թ. սեպտեմբեր-հոկտեմբեր



Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոններ – ՀԱՅԱՍՏԱՆ



Եվրասիա համագործակցություն հիմնադրամի ծրագիր

### Կոռուպցիայի հետազոտություն ՉՀ տնային տնտեսություններում

2008թ. սեպտեմբեր-հոկտեմբեր

#### ՀԱՐՑԱԹԵՐԹ

[ԶՐՈՒՑԱՎԱՐ. ԱՏՈՐԵՎ ԱՐՏԱԳՐԵՔ M-1 և M-2 ԹՎԵՐԸ ՏԻՏՂՈՍԱԹԵՐԹԻՑ:]

M-1. Ռեսպոնդենտի համարը \_\_\_\_\_ ID# \_\_\_\_\_

M-2. Ընտրանքային կետ \_\_\_\_\_

[ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀՐԱՀԱՆԳ. “ԶԳԻՏԵՄ” ԵՎ “ՀՐԱԺԱՐՎՈՒՄ ԵՄ ՊԱՏԱՍԽԱՆԵԼ” ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ ՊԵՏՔ ԶԻ ԲԱՐՁՐԱՁԱՅՆ ԿԱՐԴԱԼ ՌԵՍՊՈՆԴԵՆՏԻՆ: ԵԹԵ ԱՅԼ ՑՈՒՑՈՒՄ ԶԿԱ, ՀԱՍԱՐԵՔ, ՈՐ ԲՈԼՈՐ ՀԱՐՑԵՐՆ ՌԻՆԵՆ ՄԵԿ ՊԱՏԱՍԽԱՆԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ:]

Այժմ եկեք խոսենք Հայաստանում ընդհանուր իրավիճակի վերաբերյալ:

[ՀԱՐՑՐԵՔ ԲՈԼՈՐԻՆ]

**Q1.** Ասացեք խնդրեմ, որքանով եք հետաքրքրված քաղաքականությամբ և պետական կառավարման համակարգով: [Կարդացեք ստորև նշված ցանկը:]

- 1. Շատ եմ հետաքրքրված
- 2. Որոշ չափով եմ հետաքրքրված
- 3. Քիչ եմ հետաքրքրված
- 4. Բոլորովին հետաքրքրված չեմ
- 8. (Զգիտեմ)
- 9. (Հրաժարվում եմ պատասխանել)

**Q2.** Ընդհանուր առմամբ, ինչպե՞ս կնկարագրեք ներկա տնտեսական իրավիճակը Հայաստանում: [Կարդացեք ստորև նշված ցանկը:]

- 1. Շատ լավ
- 2. Լավ
- 3. Միջին
- 4. Վատ
- 5. Շատ վատ
- 8. (Զգիտեմ)
- 9. (Հրաժարվում եմ պատասխանել)

**Q3.** Որքանով եք բավարարված Հայաստանի ընդհանուր իրավիճակով: [Կարդացեք ստորև նշված ցանկը:]

- 1. Լիովին բավարարված եմ
- 2. Որոշ չափով բավարարված եմ
- 3. Որոշ չափով բավարարված չեմ
- 4. Բոլորովին բավարարված չեմ
- 8. (Զգիտեմ)
- 9. (Հրաժարվում եմ պատասխանել)

**Q4.** Ձեր կարծիքով, որո՞նք են այսօր Հայաստանի ամենալուրջ խնդիրները: *[Բաց հարց է սա: Ընդունեք մինչև 3 պատասխան, բայց մի կարդացեք նախապես կողավորված ցանկը:]*

1. Գործազրկություն
2. Աղքատություն
3. Քաղաքական անկայունություն
4. Վատ առողջապահական համակարգ/ առողջապահական ծառայություններ
5. Վատ ենթակառուցվածքներ
6. Խնդիրներ կրթական համակարգում
7. Խնդիրներ կենսաթոշակային համակարգում
8. Սղաճ/բարձր գներ
9. Արտագաղթ/էմիգրացիա
10. Ընդհանուր տնտեսական խնդիրներ
11. Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը/կոնֆլիկտ
12. Կոռուպցիա
13. Կառավարության և ընդդիմության միջև ընդհարումներ
14. Հանցագործության մակարդակ
15. Հարևան երկրների հետ հարաբերություններ
16. Այլ, նշեք.....
98. *(Չգիտեմ)*
99. *(Հրաժարվում եմ պատասխանել)*

**Q5.** Ձեր կարծիքով, որքա՞ն լուրջ խնդիր է կոռուպցիան (օրինակ, կաշառակերությունը, հովանավորությունը) Հայաստանում:

1. Շատ լուրջ
2. Որոշ չափով լուրջ
3. Ոչ շատ լուրջ
4. Բնավ լուրջ չի
5. **[ՄԻ ԿԱՐԴԱՑԵՔ]** *(Հայաստանում կոռուպցիա գոյություն չունի)*
8. *(Չգիտեմ)*
9. *(Հրաժարվում եմ պատասխանել)*

**ԿՈՌՈՒՊՑԻԱ**  
**Այժմ եկեք փոքր-ինչ խոսենք կոռուպցիայի մասին:**

**Q6.** Համամիտ եք արդյոք, որ ՀՀ քաղաքացիները կոռուպցիան Հայաստանում համարում են բնական երևույթ: *[Ուշադրություն դարձրեք պատասխանի ընդգծվածությանը/խստությանը, կարդացեք ստորև նշված ցանկը:]*

1. Այո, լիովին համամիտ եմ
2. Այո, որոշ չափով համամիտ եմ
3. Ոչ, այնքան էլ համամիտ չեմ
4. Ոչ, բոլորովին համամիտ չեմ
8. *(Չգիտեմ)*
9. *(Հրաժարվում եմ պատասխանել)*

**Q7.** Ըստ Ձեզ, ինչպիսի՞ն է այսօր կոռուպցիայի մակարդակը Հայաստանում անցյալ տարվա համեմատությամբ: *[Կարդացեք ստորև նշված ցանկը:]*

1. Շատ ավելի բարձր է, քան անցյալ տարի
2. Որոշ չափով բարձր է, քան անցյալ տարի
3. Գրեթե նույն չափ, ինչ անցյալ տարի
4. Որոշ չափով ցածր է, քան անցյալ տարի
5. Շատ ավելի ցածր է, քան անցյալ տարի

- 8. (Չգիտեմ)
- 9. (Հրաժարվում եմ պատասխանել)

**Q8.** Ձեր կարծիքով, ինչ չափով կարող է կրճատվել կոռուպցիան Հայաստանում: **[ՅՈՒՅՑ ՏՎԵՔ ՔԱՐՏԸ]**

- 1. Կոռուպցիան առհասարակ չի կարող կրճատվել
- 2. Կոռուպցիան կարող է կրճատվել միայն որոշ չափով
- 3. Կոռուպցիան կարող էականորեն կրճատվել
- 4. Կոռուպցիան կարող է ամբողջովին վերացվել
- 8. (Չգիտեմ)
- 9. (Հրաժարվում եմ պատասխանել)

**Q9.** Այժմ ես կկարդամ Հայաստանում գործող հաստատությունների և գրասենյակների մի ցանկ: Ի՞նչ կասեք այդ հաստատություններից յուրաքանչյուրի կոռումպացվածության աստիճանի մասին: **[Կարդացեք ստորև ցուցակից]:**

|  | <b>[ՅՈՒՅՑ ՏՎԵՔ ՔԱՐՏԸ]</b> Որքանով է <b>[նշեք հաստատությունը ստորև ցանկից]</b> ներգրավված կոռուպցիայի մեջ: |                           |                        |                      |          |              |
|--|---|---------------------------|------------------------|----------------------|----------|--------------|
|  | մեծապես կոռումպացված է  | որոշ չափով է կոռումպացված | շատ քիչ է կոռումպացված | բնավ կոռումպացված չէ | (Չգիտեմ) | (Հրաժ. պատ.) |
| a) Նախագահի աշխատակազմ   | 1   | 2                         | 3                      | 4                    | 8        | 9            |
| b) Կառավարության աշխատակազմ  | 1   | 2                         | 3                      | 4                    | 8        | 9            |
| c) Նախարարություններ   | 1   | 2                         | 3                      | 4                    | 8        | 9            |
| d) Տարածքային կառավարման մարմիններ (Մարզպետարաններ)                        | 1   | 2                         | 3                      | 4                    | 8        | 9            |
| e) Երևանի քաղաքապետարան  | 1   | 2                         | 3                      | 4                    | 8        | 9            |
| f) Տեղական ինքնակառավարման մարմիններ (քաղաքապետա-րաններ, գյուղապետարաններ) | 1   | 2                         | 3                      | 4                    | 8        | 9            |
| g) Ազգային ժողով   | 1   | 2                         | 3                      | 4                    | 8        | 9            |
| h) Քաղաքացիական ծառայության խորհուրդ                                       | 1   | 2                         | 3                      | 4                    | 8        | 9            |
| i) Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով                        | 1   | 2                         | 3                      | 4                    | 8        | 9            |
| j) Դատախազություն  | 1   | 2                         | 3                      | 4                    | 8        | 9            |
| k) Իրավապահ մարմիններ  | 1   | 2                         | 3                      | 4                    | 8        | 9            |
| l) Օմբուդսմեն (մարդու իրավունքների պաշտպան)                                | 1   | 2                         | 3                      | 4                    | 8        | 9            |
| m) Կենտրոնական ընտրական հանձնաժողով (ԿԸՀ)                                  | 1   | 2                         | 3                      | 4                    | 8        | 9            |

**Q10.** Իսկ այժմ ես կկարդամ Հայաստանում տարբեր ոլորտների և ծառայությունների մի ցանկ: Ասացեք խնդրեմ, Ձեր կարծիքով որքանով է տարածված կոռուպցիան դրանցից յուրաքանչյուրում:

|  | <b>Q10A. [ՅՈՒՅՑ ՏՎԵՔ ՔԱՐՏԸ]</b> Որքանով է տարածված կամ հազվադեպ կոռուպցիան այս ոլորտներում: |                       |                |                    |          |              |
|--|---|-----------------------|----------------|--------------------|----------|--------------|
|  | շատ տարածված է  | բավականին տարածված է  | քիչ է տարածված | շատ հազվադեպ է     | (Չգիտեմ) | (Հրաժ. պատ.) |
| a) Առողջապահություն (պոլիկլինիկաներ, հիվանդանոցներ և այլն)   | 1   | 2                     | 3              | 4                  | 8        | 9            |
| b) Կրթություն (մանկապարտեզներ, դպրոցներ, բուհեր և այլն)  | 1   | 2                     | 3              | 4                  | 8        | 9            |
| c) Պետական ռեգիստր (մասնավոր ձեռնարկությունների, ՀԿ-ների և այլնի գրանցում)   | 1   | 2                     | 3              | 4                  | 8        | 9            |
| d) Դատական ակտերի հարկադիր կատարման մարմին (դատարանի որոշումները կատարող գրասենյակներ)   | 1   | 2                     | 3              | 4                  | 8        | 9            |
| e) Պաշտպանության համակարգ (բանակ)  | 1   | 2                     | 3              | 4                  | 8        | 9            |
| f) Ընտրական համակարգ / գործընթացներ (ընտրական հանձնաժողովներ, ընտրացուցակներ, քվեաթերթերի հաշվարկ, անհատների կամ կուսակցությունների նախընտրական քարոզարշավ և այլն) | 1   | 2                     | 3              | 4                  | 8        | 9            |
| g) Մաքսային ծառայություն   | 1   | 2                     | 3              | 4                  | 8        | 9            |
| h) Հարկային ծառայություն   | 1   | 2                     | 3              | 4                  | 8        | 9            |
|  | շատ տարածված է  | որոշ չափով տարածված է | քիչ է տարածված | շատ քիչ է տարածված | (Չգիտեմ) | (Հրաժ. պատ.) |
| i) Լիցենզավորում և հավատարմագրում իրականացնող մարմիններ  | 1   | 2                     | 3              | 4                  | 8        | 9            |
| j) Պետավտոտեսչություն  | 1   | 2                     | 3              | 4                  | 8        | 9            |
| k) Ոստիկանություն (բացառությամբ պետավտոտեսչության)   | 1   | 2                     | 3              | 4                  | 8        | 9            |
| l) Անշարժ գույքի պետական կադաստր   | 1   | 2                     | 3              | 4                  | 8        | 9            |
| m) Նոտարական ծառայություն  | 1   | 2                     | 3              | 4                  | 8        | 9            |
| n) Սոցիալական ապահովություն (թոշակներ, նպաստեր և այլն)   | 1   | 2                     | 3              | 4                  | 8        | 9            |
| o) Կապ (հեռախոսակապ, ինտերնետ տրամադրողներ և այլն)   | 1   | 2                     | 3              | 4                  | 8        | 9            |
| p) Կոմունալ ծառայություններ (ջուր, գազ, էլեկտրաէներգիա)  | 1   | 2                     | 3              | 4                  | 8        | 9            |

|   |   |   |   |   |   |   |
|---|---|---|---|---|---|---|
| գ) Համայնքային ծառայություններ (աղբահանություն, թույլտվությունների տրամադրում և այլն) | 1 | 2 | 3 | 4 | 8 | 9 |
| ր) Քաղաքաշինություն (հողհատ-կացում, շինարարություն և այլն)                            | 1 | 2 | 3 | 4 | 8 | 9 |
| ս) Գործարար ոլորտ (բիզնես)  | 1 | 2 | 3 | 4 | 8 | 9 |
| տ) Զանգվածային լրատվամիջոցներ (հեռուստաընկերություններ, թերթեր և այլն)                | 1 | 2 | 3 | 4 | 8 | 9 |
| ւ) Քաղաքական կուսակցություններ  | 1 | 2 | 3 | 4 | 8 | 9 |
| վ) Հասարակական կազմակերպություններ  | 1 | 2 | 3 | 4 | 8 | 9 |
| Կ) Եկեղեցի  | 1 | 2 | 3 | 4 | 8 | 9 |

**Q10B. [ՅՈՒՅՑ ՏՎԵՔ ՔԱՐՏԸ]** Վերը (Q10-ում) նշված ոլորտներից և ծառայություններից խնդրում ենք նշել, թե ո՞րն է.

|  |  |
|--|--|
|  | <i>[Արտագրեք կողը համապատասխան սյունակում]</i> |
| 1 <sup>ին</sup> , ամենակոռումպացված ոլորտը/ծառայությունը | _____  |
| 2 <sup>րդ</sup> կոռումպացված ոլորտը/ծառայությունը        | _____  |
| 3 <sup>րդ</sup> կոռումպացված ոլորտը/ծառայությունը        | _____  |

**Q11.** Պետական կառավարման ոլորտում կոռուպցիայի համատեքստում, Ձեր կարծիքով կոռուպցիան առավել լայն է տարածված ցածրաստիճան, միջին, թե՛ բարձրաստիճան պաշտոնյաների շրջանում:

1. Կոռուպցիան առավել լայն տարածում ունի բարձրաստիճան պաշտոնյաների շրջանում (նախագահ, վարչապետ, նախարարներ, փոխնախարարներ, մարզպետեր, Ա/2գային ժողովի անդամներ):
2. Կոռուպցիան առավել լայն տարածում ունի միջին ատիճանի պաշտոնյաների շրջանում (վարչությունների/բաժինների պետեր, տեղական ինքնակառավարման մարմինների ղեկավարներ):
3. Կոռուպցիան առավել լայն տարածում ունի ցածրաստիճան պաշտոնյաների շրջանում:
4. **[ՄԻ ԿԱՐԴԱՑԵՔ]** Կոռուպցիայի մակարդակը նույնն է բոլոր մակարդակներում:
8. *(Զգիտեմ)*
9. *(Հրաժարվում եմ պատասխանել)*

**Q12.** Ձեր կարծիքով, ինչպե՞ն է փոխվել պաշտոնյաների կողմից պահանջվող կաշառքի հաճախությունը վերջին տարում: Արդյո՞ք այն աճել է, նվազել, թե՛ մնացել է նույն մակարդակին:

*[Եթե ռեսպոնդենտը պատասխանում է աճել է կամ նվազել, նշեք, թե ի՞նչ չափով:]*

1. Էականորեն աճել է
2. Որոշ չափով աճել է
3. Չի փոխվել անցյալ տարվա համեմատ
4. Որոշ չափով նվազել է
5. Էականորեն նվազել է
8. *(Զգիտեմ)*
9. *(Հրաժարվում եմ պատասխանել)*



**Q13.** Որո՞նք են տեղեկատվության այն աղբյուրները, որոնց վրա հիմնվելով եք գնահատում երկրում կոռուպցիայի մակարդակը: Խնդրում ենք ստորև ցանկից նշել մինչև 3 պատասխան՝ ըստ կարևորության:

[ԶՐՈՒՑԱՎԱՐ: **Ցույց տվեք քարտը:** Ընդունեք մինչև 3 պատասխան՝ խնդրելով ռեսպոնդենտին դրանք դասավորել **ըստ կարևորության:**]

|   |                                 |
|---|---------------------------------|
|   | Նշել կարևորությունը՝ I, II, III |
| 1. Անձնական փորձ (օրինակ՝ դուք ստիպված եք եղել կաշառք տալ կանխիկով, նվերով կամ մեկ այլ լավություն անել դրա դիմաց) |                                 |
| 1. Ազգականների կամ ընտանիքի անդամների հետ զրույցներ   |                                 |
| 2. Ընկերների և ծանոթների հետ զրույցներ  |                                 |
| 3. ՀԿ-ների կողմից կոռուպցիայի մասին տրված տեղեկատվություն (հանրային իրազեկում)                                    |                                 |
| 4. Զանգվածային լրատվամիջոցների կողմից տրված տեղեկատվություն (հեռուստատեսություն, ռադիո, թերթեր, ինտերնետ, և այլն) |                                 |

6. Այլ, նշեք .....

98. (Չգիտեմ):

99. (Հրաժարվում եմ պատասխանել):

**Q14.** Այժմ ես Ձեզ ցույց կտամ հեռուստաալիքների, ռադիոկայանների, թերթերի և Ինտերնետային կայքերի ցանկ, որտեղից մարդիկ կարող են տեղեկատվություն քաղել Հայաստանի քաղաքական և տնտեսական զարգացումների մասին: **Q14A.** Խնդրում են յուրաքանչյուր լրատվամիջոցի վերաբերյալ ասացեք՝ արդյո՞ք անձամբ օգտվել եք դրանցից վերջին 12 ամսվա ընթացքում:

[ԶՐՈՒՑԱՎԱՐ: Յուրաքանչյուր լրատվամիջոցի համար հարցրեք ռեսպոնդենտին, թե արդյո՞ք նա օգտվել է դրանցից վերջին 12 ամսվա ընթացքում: Յուրաքանչյուր ԱՅՈ պատասխանի համար շրջանակի մեջ առեք Q14A-ում 1 թիվը և տվեք Q14B հարցը:]

Կա՞ն արդյոք այլ լրատվամիջոցներ, որոնք նշված չեն այս ցանկում, և որոնցից Դուք հաճախ տեղեկատվություն եք ստանում քաղաքական և տնտեսական զարգացումների վերաբերյալ: [ԶՐՈՒՑԱՎԱՐ: Ընդունեք մինչև 3 պատասխան, բայց մի պահանջեք մեկից ավելին: Գրանցեք լրատվամիջոցի անունը «Այլ» տողում և տվեք Q14B հարցը:]

[Ստորև նշված աղյուսակից կարդացեք նաև **Q14B** և **Q14C** հարցերը:]

| Լրատվամիջոցներ<br>[Ցույց տվեք քարտը]    | Q14A.<br>Օգտվել եք<br>այս լրատվա-<br>միջոցից վերջին<br>12 ամսվա<br>ընթացքում: |    | [Յուրաքանչյուր լրատվամիջոցի համար, եթե<br>Q14.A = 1, հարցրեք Q14.B]<br>Q14B. Բացի այսօրվանից, երբ եք վերջին<br>անգամ օգտվել ... [Կարդացե՛ք ցանկում<br>լրատվամիջոցի անունը] տեղեկանալու համար<br>Հայաստանում քաղաքական և տնտեսական<br>գարգացումներին: |                            |                                    |                | Q14C. Տրամադրված<br>տեղեկատվության հավաստիության<br>առումով Ձեր օգտված<br>լրատվամիջոցներից որին եք<br>վստահում առավելագույնս: [Մեկ<br>պատասխան: Չիջանակի մեջ առեք<br>համապատասխան լրատվամիջոցի<br>համարը:] |
|---|---|----|--|----------------------------|------------------------------------|----------------|--|
|   | Այո   | Ոչ | Երեկ   | Վերջին 7 օրվա<br>ընթացքում | Վերջին 4<br>շաբաթների<br>ընթացքում | Ավելի հազվադեպ |  |
| 1. ՀՀ Ռադիոյին հեռուստաընկ.             | 1   | 2  | 1  | 2                          | 3                                  | 4              |  |
| 2. «Երկիր Մեդիա» ՀԸ                     | 1   | 2  | 1  | 2                          | 3                                  | 4              |  |
| 3. «Շանթ» ՀԸ                            | 1   | 2  | 1  | 2                          | 3                                  | 4              |  |
| 4. «Արմենիա» ՀԸ                         | 1   | 2  | 1  | 2                          | 3                                  | 4              |  |
| 5. Հ2 ՀԸ                                | 1   | 2  | 1  | 2                          | 3                                  | 4              |  |
| 6. ԱԼՄ ՀԸ                               | 1   | 2  | 1  | 2                          | 3                                  | 4              |  |
| 7. «Կենտրոն» ՀԸ                         | 1   | 2  | 1  | 2                          | 3                                  | 4              |  |
| 8. PTP ՀԸ                               | 1   | 2  | 1  | 2                          | 3                                  | 4              |  |
| 9. OPT ՀԸ                               | 1   | 2  | 1  | 2                          | 3                                  | 4              |  |
| 10. Հայաստանի հանրային ռադիո            | 1   | 2  | 1  | 2                          | 3                                  | 4              |  |
| 11. «Ազատություն»<br>ռադիոկայան         | 1   | 2  | 1  | 2                          | 3                                  | 4              |  |
| 12. «Հայ FM» ռադիոկայան                 | 1   | 2  | 1  | 2                          | 3                                  | 4              |  |
| 13. «Զորրորդ իշխանություն»<br>թ-թ       | 1   | 2  | 1  | 2                          | 3                                  | 4              |  |
| 14. «Առավոտ» թերթ                       | 1   | 2  | 1  | 2                          | 3                                  | 4              |  |
| 15. «Ազգ» թերթ                          | 1   | 2  | 1  | 2                          | 3                                  | 4              |  |
| 16. «Հայոց աշխարհ» թերթ                 | 1   | 2  | 1  | 2                          | 3                                  | 4              |  |
| 17. «Հայկական ժամանակ»<br>թ-թ           | 1   | 2  | 1  | 2                          | 3                                  | 4              |  |
| 18. «Երկիր» թերթ                        | 1   | 2  | 1  | 2                          | 3                                  | 4              |  |
| 19. «Հայաստանի<br>հանրապետություն» թերթ | 1   | 2  | 1  | 2                          | 3                                  | 4              |  |
| 20. «Գոյուս Արմենիի» թերթ               | 1   | 2  | 1  | 2                          | 3                                  | 4              |  |
| 21. «Իրավունք» թերթ                     | 1   | 2  | 1  | 2                          | 3                                  | 4              |  |
| 22. www.hetq.am                         | 1   | 2  | 1  | 2                          | 3                                  | 4              |  |
| 23. www.armenianow.com                  | 1   | 2  | 1  | 2                          | 3                                  | 4              |  |
| 24. www.armenialiberty.org              | 1   | 2  | 1  | 2                          | 3                                  | 4              |  |
| 25. www.a1plus.am                       | 1   | 2  | 1  | 2                          | 3                                  | 4              |  |
| 26. www.groong.com                      | 1   | 2  | 1  | 2                          | 3                                  | 4              |  |
| 27. Այլ, նշեք.....                      | 1   | 2  | 1  | 2                          | 3                                  | 4              |  |
| 28. Այլ, նշեք.....                      | 1   | 2  | 1  | 2                          | 3                                  | 4              |  |
| 29. Այլ, նշեք.....                      | 1   | 2  | 1  | 2                          | 3                                  | 4              |  |

Q15. Այժմ ես կկարդամ գործողությունների մի քանի տեսակներ: Դրանցից յուրաքանչյուրի համար ասացե՛ք խնդրեմ՝ արդյո՞ք այն Ձեր պատկերացմամբ կոռուպցիոն գործունեություն է, թե՞ ոչ:

|   | Այո | Ոչ | (Չգիտեմ) | (Հրաժ. պատ.) |
|---|-----|----|----------|--------------|
| a. Ոստիկանին գումար առաջարկել՝ Ձեր վարորդական իրավունքը չառգրավելու/ չվերցնելու համար:                | 1   | 2  | 8        | 9            |
| b. Նվեր տալ բժիշկին՝ հատուկ խնամք ստանալու համար:   | 1   | 2  | 8        | 9            |
| c. Երբ պետական պաշտոնյան օգնում է բարեկամին ԲՈՒՅ ընդունվել:   | 1   | 2  | 8        | 9            |
| d. Հարևանի այգուց ծաղիկ կամ միրգ քաղել՝ առանց վերջինիս թույլտվության:                                 | 1   | 2  | 8        | 9            |
| e. Կապերի/ծանոթությունների օգտագործում՝ Ձեզ մոտիկ որևէ մեկին բանակից ազատելու համար:                  | 1   | 2  | 8        | 9            |
| f. Վճարել դատավորին՝ ցանկալի վերաբերմունք /վճիռ ստանալու համար:                                       | 1   | 2  | 8        | 9            |
| g. Ուսանողը կամ ուսանողի ծնողը դասախոսին նվեր են տալիս քննությունների օրը:                            | 1   | 2  | 8        | 9            |
| h. Փոքր ոչ պաշտոնական վճարումներ կատարել թոշակների ստացման համար:                                     | 1   | 2  | 8        | 9            |
| i. Պետական պաշտոնյան երաշխավորում է իր բարեկամին՝ որևէ նախարարությունում աշխատանքի տեղավորելու համար: | 1   | 2  | 8        | 9            |
| j. Պետական պաշտոնյայի կողմից ծառայողական ավտոմեքենայի օգտագործումը անձնական կարիքների համար:          | 1   | 2  | 8        | 9            |
| k. Պետական պաշտոնի չարաշահումը անձնական բիզնեսի նպատակներով:  | 1   | 2  | 8        | 9            |

**Q16.** Ձեր կարծիքով, պետական պաշտոնյային կաշառք տալիս, ստորև թվարկված տարբերակներից ո՞րն է առավել հաճախ հանդիպում: [Կարդացեք պատասխանների տարբերակները: ԸՆԴՈՒՆԵՔ ՄԵԿ ՊԱՏԱՍԽԱՆ:]

1. Պետական պաշտոնյան ակնարկում է կամ պահանջում է վճարում:
  2. Մարդիկ իրենց կամքով են վճար առաջարկում:
  3. Նախապես հայտնի է, թե որքան և ինչպես վճարել, հետևաբար դա չի քննարկվում:
  4. Այլ, նշեք .....
98. (Չգիտեմ):  
99. (Հրաժարվում եմ պատասխանել):

**Q17.** Եթե որևէ մեկը կաշառք է տվել պետական պաշտոնյային որևէ ծառայություն ստանալու կամ խնդիր լուծելու նպատակով, որքանով նա կարող է վստահ լինել, որ այդ ծառայությունը կմատուցվի, կամ այդ խնդիրը կլուծվի: [Կարդացեք պատասխանների տարբերակները: ԸՆԴՈՒՆԵՔ ՄԵԿ ՊԱՏԱՍԽԱՆ:]

1. Շատ վստահ
  2. Որոշ չափով վստահ
  3. Փոքր-ինչ անվստահ
  4. Բացարձակապես անվստահ
8. (Չգիտեմ)  
9. (Հրաժարվում եմ պատասխանել)

**Q18.** Այժմ ես կկարդամ կոռուպցիայի որոշ հնարավոր դրդապատճառներ: Ձեր կարծիքով, որո՞նք են այն հիմնական պատճառները, որ մարդկանց դրդում են կոռուպցիոն վարքագիծ դրսևորելու: Նկատի ունենք այն պատճառները, որոնք մարդիկ նշում են իրենց կոռուպցիոն վարքագիծն արդարացնելու համար: **[Ցույց տվեք Քարտը: Ընթերցեք պատասխանները: Ընդունեք մինչև երեք պատասխան:]**

1. Խնդիրը լուծելու այլ տարբերակ չկա
2. Խուսափել պատժից/տուգանքից
3. Խուսափել ավելի բարձր պաշտոնական վճարումներից
4. Արագացնել որևէ գործընթաց
5. Ստանալ պատշաճ վերաբերմունք (ծառայություն)
6. Ստանալ արտոնյալ վերաբերմունք
7. Եկամտի այլընտրանքային աղբյուր ունենալ
8. Վերադասներին պարտադիր (ապօրինի) վճարումների պրակտիկա
9. Այլ, նշեք .....
98. (Չգիտեմ)
99. (Չրաժարվում եմ պատասխանել):

**ԱՆՁՆԱԿԱՆ ՓՈՐՁ**

Հաջորդ մի քանի հարցերը վերաբերում են կոռուպցիայի հետ կապված Ձեր անձնական փորձին: Հիշեցնենք, որ Ձեր բոլոր պատասխանները խիստ գաղտնի կմնան:

**Q19.** Պատկերացրեք, որ Ձեզ կաշառք են առաջարկում (դրամի, նվերի կամ այլ տեսքով): Ինչպե՞ս կվարվեք նման իրավիճակում:

- |                                |                       |
|--------------------------------|-----------------------|
| 1. Կվերցնեմ                    | [Անցեք Q20]           |
| 2. Չեմ վերցնի                  | [Անցեք Q21]           |
| 3. Այլ, նշեք .....             | [Գրանցեք և անցեք Q22] |
| 98. (Չգիտեմ)                   | [Անցեք Q22]           |
| 99. (Չրաժարվում եմ պատասխանել) | [Անցեք Q22]           |

[Հարցրեք Q20 եթե Q19=1]

**Q20.** Ինչու՞ կվերցնեիք: [ՄԻ ԸՆԹԵՐՑԵՔ նախապես կողավորված տարբերակները: Նշեք այն տարբերակը, որին ռեսպոնդենտի պատասխանն առավելագույնս է համապատասխանում: Եթե նման տարբերակ չկա, պատասխանը գրանցեք «Այլ» տողում]:

Կվերցնեի ...

1. քանի որ բոլորը վերցնում են
2. քանի որ ունեմ փողի կարիք
3. քանի որ պարտավոր եմ մի մասը փոխանցել «վերև»
4. Այլ, նշեք .....
98. (Չգիտեմ):
99. (Չրաժարվում եմ պատասխանել):

[Հարցրեք Q21 եթե Q19=2]

**Q21.** Ինչու՞ չեիք վերցնի: [ՄԻ ԸՆԹԵՐՑԵՔ նախապես կողավորված տարբերակները: Նշեք այն տարբերակը, որին ռեսպոնդենտի պատասխանն առավելագույնս է համապատասխանում: Եթե նման տարբերակ չկա, պատասխանը գրանցեք «այլ» տողում]:

Չեի վերցնի ...

1. քանի որ պատժվելու ռիսկը բարձր է
2. քանի որ դա անընդունելի է ինձ համար
3. ...և կփորձեի հարցը իրավական ծանապարհով լուծել

4. Այլ, նշեք .....  
 98. (Չգիտեմ)  
 99. (Հրաժարվում եմ պատասխանել):

**Q22.** Պատկերացրեք, որ Ձեզանից պահանջվում է կաշառք տալ (դրամի, նվերի կամ այլ տեսքով): Ինչպե՞ս կվարվեք այս պարագայում: Կտայի՞ք:  
 [Մի կարդացեք:]

- |                                |                       |
|--------------------------------|-----------------------|
| 1. Այո, կտայի                  | [Անցեք Q23]           |
| 2. Ոչ, չէի տա                  | [Անցեք Q24]           |
| 3. Այլ, նշեք .....             | [Գրանցեք և անցեք Q25] |
| 98. (Չգիտեմ)                   | [Անցեք Q25]           |
| 99. (Հրաժարվում եմ պատասխանել) | [Անցեք Q25]           |

[Հարցրեք Q23 եթե Q22=1]

**Q23.** Ինչո՞ւ կտայիք: [ՄԻ ԸՆԹԵՐՑԵՔ նախապես կողմավորված տարբերակները: Նշեք այն տարբերակը, որին ռեսպոնդենտի պատասխանն առավելագույնս է համապատասխանում: Եթե նման տարբերակ չկա, պատասխանը գրանցեք «Այլ» տողում]:

Կտայի, ...

1. քանի որ բոլորը տալիս են  
 2. քանի որ ծառայությունը ստանալու այլ տարբերակ չկա  
 3. .... և կփորձեի «բանակցել» գումարի վերաբերյալ  
 4. Այլ, նշեք .....  
 98. (Չգիտեմ)  
 99. (Հրաժարվում եմ պատասխանել):

[Հարցրեք Q24-ը, եթե Q22=2]

**Q24.** Ինչո՞ւ չէիք տա: [ՄԻ ԸՆԹԵՐՑԵՔ նախապես կողմավորված տարբերակները: Նշեք այն տարբերակը, որին ռեսպոնդենտի պատասխանն առավելագույնս է համապատասխանում: Եթե նման տարբերակ չկա, պատասխանը գրանցեք «Այլ» տողում]:

Չէի տա ...

1. քանի որ պատժվելու ռիսկը բարձր է  
 2. քանի որ դա անընդունելի է ինձ համար  
 3. և կփորձեի հարցը իրավական ճանապարհով լուծել  
 4. Այլ, նշեք .....  
 98. (Չգիտեմ):  
 99. (Հրաժարվում եմ պատասխանել):

**Q25.** Վերջին 12 ամիսների ընթացքում Դուք կամ Ձեր ընտանիքի որևէ անդամ դիմել է արդյոք հետևյալ հաստատություններին [Ցույց տվեք քարտը և կարդացեք կատեգորիաները]:

**Q26.** [Հարցրեք, եթե Q25=1 որևէ տողի դիմաց:] Վերջին 12 ամիսների ընթացքում երբ Դուք կամ Ձեր ընտանիքի որևէ անդամ դիմել եք այդ հաստատություններին, ապա ստիպված եղել եք այդ հաստատություններում առնվազն մեկ անգամ «ոչ պաշտոնական/հավելյալ» վճարումներ (գումարի կամ նվերի տեսքով) կատարել:

**Q27.** [Հարցրեք, եթե Q26=1 որևէ տողի դիմաց:] Կարելի է իմանալ՝ որքա՞ն է եղել նման վճարումներից վերջինի արժեքը/գումարը:

**Q28.** [Հարցրեք, եթե Q26=1 որևէ տողի դիմաց:] Իսկ որքա՞ն է եղել կաշառք/գումար վերջին 12 ամիսների ընթացքում ձեր կողմից իրականացված «ոչ պաշտոնական/հավելյալ» վճարումների ընդհանուր գումարը:

| [Ցույց տվեք քարտը]  | Q25. Դիմել էք վերջին 12 ամիսների ընթացքում: |   |   |   | Q26. Եթե ԱՅՈ, ստիպված եղել եք հավելավճար տալ: |   |   |   | Եթե «ոչ պաշտոնական/ հավելյալ» վճարումներ եք կատարել՝      |   |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
|   | 1   | 2 | 8 | 9 | 1   | 2 | 8 | 9 | Q27. Որքան եք տվել վերջին անգամ<br>Չգիտեմ=8<br>Հրաժ. է =9 | Q28. Որքան եք տվել վերջին 12 ամիսների ընթացքում<br>Չգիտեմ=8<br>Հրաժ. է =9 |
| a) Պետական անվճար ծննդոգնություն  | 1   | 2 | 8 | 9 | 1   | 2 | 8 | 9 |   |   |
| b) Առողջապահություն (պոլիկլինիկաներ, հիվանդանոցներ և այլն, բացի ծննդոգնությունից)                   | 1   | 2 | 8 | 9 | 1   | 2 | 8 | 9 |   |   |
| c) Կրթություն (մասնապարտեզներ, դպրոցներ, բուհեր և այլն)   | 1   | 2 | 8 | 9 | 1   | 2 | 8 | 9 |   |   |
| d) Պետական ռեզիստր (մասնավոր ձեռնարկությունների և հասարակական կազմակերպությունների գրանցում և այլն) | 1   | 2 | 8 | 9 | 1   | 2 | 8 | 9 |   |   |
| e) Դատական ակտերի հարկադիր կատարման մարմին (դատարանի որոշումները կատարող գրասենյակներ)              | 1   | 2 | 8 | 9 | 1   | 2 | 8 | 9 |   |   |
| f) Պաշտպանության համակարգ (բանակ)   | 1   | 2 | 8 | 9 | 1   | 2 | 8 | 9 |   |   |
| g) Մաքսային ծառայություն  | 1   | 2 | 8 | 9 | 1   | 2 | 8 | 9 |   |   |
| h) Հարկային ծառայություն  | 1   | 2 | 8 | 9 | 1   | 2 | 8 | 9 |   |   |
| i) Լիցենզավորում և հավատարմագրում իրականացնող մարմիններ   | 1   | 2 | 8 | 9 | 1   | 2 | 8 | 9 |   |   |
| j) Պետավտոտեսչություն   | 1   | 2 | 8 | 9 | 1   | 2 | 8 | 9 |   |   |
| k) Ոստիկանություն (բացառությամբ պետավտոտեսչության)  | 1   | 2 | 8 | 9 | 1   | 2 | 8 | 9 |   |   |
| l) Անշարժ գույքի պետական կադաստր  | 1   | 2 | 8 | 9 | 1   | 2 | 8 | 9 |   |   |
| m) Նոտարական ծառայություն   | 1   | 2 | 8 | 9 | 1   | 2 | 8 | 9 |   |   |
| n) Սոցիալական ապահովություն (թոշակներ, նպաստեր և այլն)  | 1   | 2 | 8 | 9 | 1   | 2 | 8 | 9 |   |   |
| o) Կապ (հեռախոսակապ, ինտերնետ տրամադրողներ և այլն)  | 1   | 2 | 8 | 9 | 1   | 2 | 8 | 9 |   |   |
| p) Կոմունալ ծառայություններ (ջուր, գազ, էլեկտրաէներգիա)   | 1   | 2 | 8 | 9 | 1   | 2 | 8 | 9 |   |   |

**Q29.** Վերջին 12 ամիսների ընթացքում որևէ հանրային ծառայություն ստանալու համար Դուք լսել եք Ձեր բարեկամների, ազգականների, ընկերների կամ այլ մեկի կողմից «ոչ պաշտոնական/հավելյալ» վճարումներ կատարելու մասին:

1. Այո
2. Ոչ
8. (Չգիտեմ)
9. (Հրաժարվում եմ պատասխանել)

**Q30.** Պետական պաշտոնյաների հետ առնչվելիս, որքան հաճախակի են Ձեզ հետ պատահել հետևյալ երևույթները. [Մեկ առ մեկ ընթերցեք տարբերակները և հարցրեք՝ արդյո՞ք դա տեղի է ունեցել միշտ, հիմնականում, հազվադեպ կամ երբեք: **Ցույց տվեք քարտը՝** պատասխանների տարբերակները ընտրելու համար:]

|  | Միշտ | Չիմասկանում | Չազվարես | Երբեք | Կամավոր. երբեք չեմ անչլել | (Չգիտեմ) | (Չրաժ. պատ.) |
|--|------|-------------|----------|-------|---------------------------|----------|--------------|
| a. Պաշտոնյաները բացահայտ պահանջում են գումար, նվեր, կամ որևէ «լավություն»                                      | 1    | 2           | 3        | 4     | 5                         | 8        | 9            |
| b. Պաշտոնյաները բացահայտ չեն պահանջում, սակայն ակնարկում են գումարի, նվերի, կամ «լավության» ակնկալիքների մասին | 1    | 2           | 3        | 4     | 5                         | 8        | 9            |
| c. Ինքներդ եք գումար տալիս պետական պաշտոնյային   | 1    | 2           | 3        | 4     | 5                         | 8        | 9            |
| d. Ինքներդ եք նվեր տալիս պետական պաշտոնյային   | 1    | 2           | 3        | 4     | 5                         | 8        | 9            |
| e. Ինքներդ եք «լավություն» անում պետական պաշտոնյային   | 1    | 2           | 3        | 4     | 5                         | 8        | 9            |
| f. Ձեզնից պահանջում են «լավություն» անել պետական պաշտոնյայի բարեկամներին                                       | 1    | 2           | 3        | 4     | 5                         | 8        | 9            |
| g. Դուք անձնական կապերն եք օգտագործում՝ արտոնյալ վերաբերմունք ստանալու համար                                   | 1    | 2           | 3        | 4     | 5                         | 8        | 9            |

[Եթե Q27a=1 և/կամ Q27b=1, հարցրեք]

**Q31.** Ասացիք, որ Դուք կամ Ձեր ընտանիքի որևէ անդամ կաշառք է տվել առողջապահական ոլորտում ծառայություններ ստանալու համար: Խնդրում եմ ասեք, թե դա ի՞նչ տիպի բուժհաստատությունում է եղել: [Ընթերցեք պատասխանները, նշեք բոլոր համընկնող տարբերակները:]

1. Առաջնային օղակի բուժհաստատություն (պոլիկլինիկա, ամբուլատորիա կամ բուժկետ) [Անցեք Q32]
2. Երկրորդային կամ երրորդային օղակի բուժհաստատություն (հիվանդանոց կամ կլինիկա) [Անցեք Q33]
8. (Չգիտեմ) [Անցեք Q33]
9. (Չրաժարվում եմ պատասխանել) [Անցեք Q33]

[Չարցրեք Q32 եթե Q31=1]

**Q32.** Նշեք խնդրեմ ծառայության տեսակը, որի համար կաշառք է տրվել: [Ընթերցեք պատասխանները, նշեք բոլոր համընկնող տարբերակները:]

1. Բժշկական խորհրդատվություն
2. Լաբորատոր և ախտորոշման ծառայություններ
3. Անվճար դեղորայքի ստացում (եթե նման իրավունք կա)
4. Բուժում
8. (Չգիտեմ)
9. (Չրաժարվում եմ պատասխանել)

**ԱՆՁՆԱԿԱՆ ՎԱՐՔ**

[Չարցրեք բոլորին]

Շատերն ասում են, որ կոռուպցիան ոչ միայն քաղաքականության խնդիր է, այլ նաև կախված է հասարակության պահվածքից: Այժմ կցանկանայի մի քանի հարց տալ այն մասին, թե ի՞նչ կարելի է անել Չայաստանում կոռուպցիան կրճատելու համար:

**Q33.** Անձամբ Դուք ի՞նչ կարող եք անել՝ Հայաստանում կոռուպցիայի մակարդակը նվազեցնելու համար: Թվարկեք խնդրեմ կոնկրետ քայլեր, որ անձամբ կձեռնարկեիք կոռուպցիայի դեմ պայքարում: [Հնարավոր են մի քանի պատասխաններ: Մի կարդացեք տարբերակները:]

1. Ձեռնպահ մնալ պետական ծառայություններ ստանալու համար կաշառք տալուց
2. Հրաժարվել պաշտոնյաներին կամ նրանց բարեկամներին «լավություն» անելուց
3. Հայտնել պետական պաշտոնյաների կողմից կոռուպցիայի դեպքերի մասին ՀԿ-ների հակակոռուպցիոն կենտրոնին
